№ 243 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1910 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 243

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպեկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

14-րդ Գրենադերեան Գրուզինսկի գունդը, որ գտնվում է ԲԷԼԻ ԿԼԻՒՉ աւանում, Թիֆլիսի նահանգում, ՀՐԱՒԻՐՈՒՄ Է ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ առանձնել գնդի համար մսեղէնի և այլ մթերքների մատակարարումը՝ սկսած յունվարի 1-ից 1911 թ. մինչև յունվարի 1-ը 1912 թ., ներկայացնելով 2,000 ր. գրաւական: Աճուրդը տեղի կունենայ, թէ բերանացի և թէ գրաւոր—փակ ծրարներով—Նոյեմբերի 15-ին 1910 թ., ցերեկվայ ժամը 12-ին, գնդի դիւանատանը, Բէլի-Կլիւչում, ուր և կարելի է տեսնել մատակարարութեան պայմանները: Պոստով ուղարկվելիք յայտարարութիւնների ժամանակ, գրաւականը պիտի ուղարկել առանձին, ներփակած ծրարի մէջ:

(Ն. 2.) առ. 1203. 3—3

ԿԱՆԱՑԻ ԳԼԽԻ ՍԱՐՔ ՈՒ ԶԱՐԴԱՐԱՆՔ

գնել ցանկացողներին խնդրվում է դիմել **ԲԱԼԱՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆՑԻ ԽԱՆՈՒԹԸ**, որ գտնվում է **ԲԱԳՒՈՒՄ**, Տորգովայա փողոցի վրա, Մուխտարովի տանը:

(Կ.) առ. 1236. 3—1

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

II

Թեմական խորհուրդները ապարէգ կոչվեցին իրականութեան որոշ անխուսափելի պահանջներին բաւարարութիւն տալու համար:

Դպրոցների ու կալուածների կառավարութեան և առհասարակ դպրոցական ապահովութեան մասին հոգատար մտածողութիւնը վաղուց թելադրում էր բարւոքել եղած վիճակը և ընդարձակել օժանդակիչ մարմինների գործակցութիւնը:

Դպրոցական բարեկարգութեան դըժուար ու պատասխանատու գործը, կալուածների կառավարութեան բարւոքումը առաջ կարող էին ընթանալ խելացի ղեկավարութեամբ, աչալուրջ հսկողութեամբ և նորանոր հասոյթներ գրաւելով այդ գործի համար: Հայ հոգևորականութիւնը իրագործել է իր վրա վերցրած յանձնարարութիւնների մի նշանաւոր մասը աջակից մարմիններով, որոնց գործունէութեան ծաւալը եղել է մեծ կամ փոքր՝ նայած գործի էութեան:

Պարսկահայերի դպրոցական, կալուածական և մասամբ վարչական ներքին գործառնութիւնները նոյնպէս անհրաժեշտութիւն դարձրին աջակից մարմինների մասնակցութիւնը, որով միայն կարելի է եղել հրաւիրել փոքր ի շատէ բանիմաց ույժեր և գրաւել նպաստներ հանրային հաստատութիւնների համար:

Թեմական խորհուրդները կը տացնեն վերահսկողութիւն և կօնտրօլ գործերի վրա աւելի կատարեալ կերպով, քան այդ հնարաւոր է եղել մինչև այժմ: Թեմական խորհուրդը, բաղկացած լինելով ընտրեալ անձերից, որոնք լաւ ծանօթ են իրանց շրջանի և հասարակութեան մէջ կատարվող եղելութիւնների հետ, կը հանդիսանան հեղինակաւոր քննադատներ և կառաջադրեն կորական պահանջներ գործավարութեան վերաբերութեամբ:

Եւ եղած նախնական ժողովները ցոյց տուին, որ մեր հասարակութիւնը, յանձին իր ընտրեալների, ցանկանում է նախաձեռնիչը լինել իր դպրոցական և կալուածական գործերի համար և ազատել նրանց պատահականութեան կամ անհոգութեան կամայականութիւններից:

Անշուշտ, կեանքի փաստերը և իրականութեան առանձնայատկութիւնները կը պարզեն թեմական խորհուրդների գործունէութեան ծրագիրները առաջիկայում. բայց ամեն մի ապագայ թիւրիմացութիւն վերացնելու համար անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր հաստատութեան և հիմնարկութեան իրաւական սահմանները գծված լինեն կարելիին չափ որոշակի, ինչպէս մենք ասացինք անցեալ անգամ:

Ամեն մի հաստատութիւն ուժեղ և յարատև է, երբ մի կողմից նա համապատասխան է կենսական պահանջի և անհրաժեշտութեան, իսկ միւս կողմից նա ունի իրաւական ամուր հող իր ոտքերի տակ: Թեմական խորհուրդները ունեն որոշ կենսական հիմքեր և բղխում են ժամանակակից կեանքի պահանջների թելադրանքից: Ցանկալի է միևնոյն ժամանակ, որ նրանց իրաւասութեան ծաւալները որոշակի ձևակերպվեն, աւելի մանրամասնօրէն, քան այդ տեղի ունի ներկայումս ընդհանուր գծերով:

Եւ անշուշտ հոգևոր իշխանութիւնը, որ ճանաչել է թեմական խորհուրդների նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը, ամեն ջանք կը թափէ որոշ կարգ մտցնելու այն բոլոր հաստատութիւնների յարաբերութեան մէջ, որոնք կարող են այս ու այն շփումները ունենալ թեմական խորհուրդների հետ:

Այդ կարևոր է ներկայումս կեանքի կոչված օգտաւէտ հիմնարկութեան յարատև և բեղմնաւոր գործունէութեան համար:

Ա. Քալանթար

ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅԻ ԱԹԱՆՋՆԱԼԸ

Մենք ստացանք Մոսկվայից հոկտեմբերի 31-ի երեկոյեան ժամը 6-ից խփված հետևեալ հեռագիրը.

Կոմս Լէվ Տօլստոյ ապաստանել է Կալուգայի նահանգի մի վանքում և այլ ևս չի վերադառնայ Եասնայա Պօլեանա:

Եմ. Ք. Նազարեան

Մոսկվա, 30 հոկտեմբերի

Այսօր, հոկտ. 30-ին, առաւօտեան ժամը 4-ին, «Русскія Вѣдомости» լրագրի խմբագրութիւնը ստացաւ Տուլայից հետևեալ հեռագիրը.

«Լէվ Տօլստոյը հոկտեմբերի 28-ին կարգադրեց լծել ձիերը և բժիշկ Մակօվէցկիի հետ միասին մեկնեց Շչեկինօ, որտեղից երկաթուղով դիմեց դէպի հարաւ: Իր կնոջ անունով թողած գրութեան մէջ Տօլստոյը գրում է, որ իր այժմեան կեանքը ձանձրացրել է նրան, նա պահանջ է զգում մենակութեան, խնդրում է փորձ չանել որոնելու իրան և սրտաուչ կերպով բաժանվում է իր ընտանիքից: Ասում է, որ, իբրև անկեղծ քրիստոնեայ, նա պէտք է ապրի խաղաղութեան մէջ և ոչ մի դէպքում չի վերադառնայ: Թէ ո՞ւր է գտնվում Տօլստոյը յայտնի չէ»:

Այստեղ ստացված տեղեկութիւնների համաձայն, Լ. Ն. Տօլստոյի մեկնելը Եասնայա Պօլեանայից չէ ներկայանում միանգամայն անսպասելի՝ նրան մօտ անձերի համար: Կօրէնէվօ և Կօչէրի գնացած ժամանակները Տօլստոյն արդէն ձգտում էր ցոյց տալիս ապրելու միայնակ: (Հ. Գ.)

Տուլա, 30 հոկտեմբերի

Լ. Ն. Տօլստոյի ընտանիքը հաւաքվել է, բացի Լէվ Լվօվիչից, որ ներկայումս գտնվում է արտասահմանում: Ընտանիքի վիշտը, առանձնապէս կոմսուհի Սօֆիա Անդրէեվնայի, աննկարագրելի է: Հիմք կայ կարծելու, որ Տօլստոյը մեկնել է Օպտինա անապատը, որ գտնվում է Կալուգայի նահանգում, ուր նա եղել է առաջ երկու անգամ: Շրջակայ գիւղերի գիւղացիները հոկտ. 28-ին տեսել են Տօլստոյին Մակօվէցկիի հետ, Մոսկվա-Կուրսկ երկաթուղու 3-րդ կարգի վագօնով գնալիս: Օդօէվի գաւառի մի հողատէր տեսել է Տօլստոյին Րեազանի երկաթուղային գծի վրա, Գօրբաչէվի և Բելէվի միջև, Օպտինա անապատը տանող ճանապարհին: (Հ. Գ.)

Մոսկվա, 31 հոկտեմբերի

Այստեղ ստացված տեղեկութիւնների համաձայն Տօլստոյը գտնվում է Կօզելսկի գաւառի Շամարդինի կանանց վանքում, որը գտնվում է Օպտինա անապատից 12 վերստ հեռաւորութեան վրա: (Հ. Գ.)

Վիէննա, 31 հոկտեմբերի

Լրագիրները յօդուածներ և ֆելիէտօններ են նուիրել կոմս Տօլստոյին:

(Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 30 հոկտեմբերի

Պալատի մինիստրը հեռագրում է. «Երէկ, հոկտ. 29-ին, առաւօտեան Վօլֆսհարդէն ամրոցն եկաւ գերմանական կայսր Վիլհելմ II-ը: Կայսրին դիմաւորելու համար Էգլսբախ կայարանը գնացին Թագաւոր Կայսրը, Հէսսէնի մեծ դուքսը և պրուսական Հէնրիխ պրինցը իրանց շքախմբերի մարդկանց ուղեկցութեամբ: Ցերեկվայ ժամը 1-ին Վօլֆսհարդէն ամրոցում կայացաւ նախաճաշ, որին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան, Վիլհելմ կայսրը, մեծ դուքսը և դքսուհին, պրուսական պրինց Հէնրիխը և նրանց շքախմբերի անձինք: Նախաճաշից յետոյ Թագաւոր Կայսրը միւս Օգոստափառ Անձերի հետ գնաց ճանապարհ դնելու Վիլհելմին Էգելսբախ կայարանը: Երկու Միապետների հանդիպումը և տեսակցութիւնը կրում էին ամենասրտագին բնաւորութիւն»: (Հ. Գ.)

Բեռլին, 31 հոկտեմբերի

Գերման-ռուսական ընկերութիւնը ռուս և գերման անդամների կողմից Պօտսդամի տեսակցութեան առիթով կայսրին ուղարկեց ողջոյնի հեռագիր: Կայսրը հաճեց յանձնարարել Բեռլինի ռուսաց դեսպանին յայտնել ընկերութեանը բարձրագոյն շնորհակալութիւն արտայայտած զգացմունքների համար:

(Հ. Գ.)

Լիսաբոն, 30 հոկտեմբերի

Ռուսաստանի, Գերմանիայի, Շվեդիայի և Հիւսիս-Ամերիկական Միացեալ-Նահանգների դիպլօմատիական ներկայացուցիչները տեղեկացրին պօրտուգալական ժամանակաւոր կառավարութեան, որ նրանք իրանց կառավարութիւններից լիազօրված են վերստին յարաբերութիւններ պահպանել ընթացիկ գործերի վերաբերմամբ: Այս դեռ չէ նշանակում, թէ Պօրտուգալիայի նոր ռէժիմը ճանաչվում է վերջնականապէս: (Հ. Գ.)

Վիէննա, 31 հոկտեմբերի

Մամուլը չափազանց համակրանքով ընդգծում է երաժշտագէտ Սաֆօնօվի հանդէս գալը հսկայական համերգի մէջ: Աջողութիւն ունէր նաև դաշնակահարուհի Վէրա Սկրօբինան:

«Ցէյտ» լրագրի մէջ տպված են մերկացումներ այն փաստաթղթերի վերաբերութեամբ, որոնց վերջին տարիները մեծ քանակութեամբ ձեռք բերեց Բէլգրադում ունգարական աւստրիական գործակալ Հօրվատը կեղծողների խմբից: Փաստաթղթերը տալիս են Սերբիայից կաշառված խօրվատ և ունգար քաղաքագէտների անունները և նպատակ ունէին վարկաբեկել վերջիններիս Վիէննայում: Ունգարացի աչքի ընկնող քաղաքագէտների գաղտնի պայմանագիր կապելու լուրերը սերբ կառավարութեան հետ հիմնված են հէնց այդ կեղծ փաստաթղթերի վրա: Հօրվատը, ծնունդով Գօրօվից, իր մատուցած ծառայութիւնների համար ստացաւ ազնուականի կոչում և պարգևատրվեց բարձր շքանշանով, սակայն կասկածանքներից յետոյ պաշտօնով փոխադրվեց Բրիւսէլ: Կեղծ փաստաթղթերի մերկացումները, «Ցէյտի» ասելով, բղխում են խօրվատ յայտնի պաշտօնական անձնաւորութիւնից:

Կայսրն առանձին ունկնդրութեան ընդունեց նոր նշանակված զինուորական գործակալ Զանկէվիչին և զինուորական գործակալի նախկին պաշտօնակատար Պօտօցկիին:

Եկաւ ռուսաց նոր դեսպան Գիրսը:

(Հ. Գ.)

Բեռլին, 30 հոկտեմբերի

Ֆինանսների մինիստր Կօկօվցէվը մեկնեց Պետերբուրգ: (Հ. Գ.)

Պարիզ, 31 հոկտեմբերի

Ջուրը Սէնայում բարձրանում է: Ջրի տակ մնացած էլեքտրական կայարանը չէ գործում: (Հ. Գ.)

Պարիզ, 30 հոկտեմբերի

Սէն գետը վարարեց: Նաւակների և գետային շոգենաւերի երթևեկութիւնը կանգ առաւ: Հեղեղների մասին հաղորդում են Բուրգունդիայից: Մարնա, Գար, Իօնն գետերի վրա փոթորկի ժամանակ խեղդվեցին 6 մարդ: Բուլօն-սիւր-մէրի մօտերը ջրի տակն անցան ձկնորսական մի քանի նաւակներ: (Հ. Գ.)

Ստոկհօլմ, 31 հոկտեմբերի

Նօբէլեան մրցանակը քիմիայի համար տրվեց Գէտտինգէնի պրօֆէսօր Օտտօ Վալլախին: (Հ. Գ.)

Լօնդօն, 30 հոկտեմբերի

Վաշինգտօնում զինուորական մինիստրը իր ճառում խօսեց յօգուտ պարլամենտի շուտափոյթ արձակման, որպէսզի երկիրը կարող լինի պարզաբանվել այն հարցի նկատմամբ, թէ պէ՞տք է արդեօք պալատը գերիշխանութիւն ունենայ թէ՞ ոչ:

Ասկվիտը մեկնեց Սանդրինհէմ՝ Թագաւորի մօտ: Բոլորովին հաւանական է թւում, որ Ասկվիտը Թագաւորին առաջարկելու է նշանակել նոր պէրեր, որպէսզի ապահովվեն վերին պալատից ընդունված կառավարական առաջարկութիւնները լօրդերի պալատի veto-ի իրաւունքը սահմանափակելու վերաբերութեամբ: Կաբինէտի հրաժարականը կամ պարլամենտի արձակումը կախված կը լինի նրանից, թէ ի՛նչ վերաբերմունք ցոյց կը տայ համայնքների պալատի մեծամասնութիւնը դէպի առաջին մինիստրի հայեացքները:

(Հ. Գ.)

Վիէննա, 31 հոկտեմբերի

«Կօրրէսպօնդէնց Բիւրօն» յայտարարել է Լվօվից ստացված պաշտօնական հաղորդագրութիւնը, որը վերաբերում է ժողովրդական դպրոցի ռուս աշակերտ Կօխանչիկի մահվանը, որը պատահեց հոկտեմբերի 10-ին, Ժուլկիևայում:

Աշակերտի մահը վերագրում են ուսուցիչ Գրէյսի չարչարանքներին, որը կատարվել է իբր թէ դպրոցական աղօթքը լեհերէն լեզուով չարտասանելու պատճառով, որը ծառայեցվեց թշնամացած խմբի կողմից Գալիցիայի դպրոցական իշխանութեան դէմ:

Մինչդեռ, նախ՝ բժշկա-դատաստանական անդամահատութիւնը ապացուցեց, որ մահը առաջացել է թոքախտից յետոյ առաջացած ուղեղային բորբոքումից, այսինքն բնական մահից, ըստ որում մարմնի վրա չը կան արտաքին վնասուածքների հետքեր, և երկրորդ՝ որ դպրոցական քննութեան արդիւնքները ժխտում են ազգային կամ քաղաքական շարժառիթները, եթէ նոյնիսկ չարչարանքների կասկածը ապացուցվի. Ժուլկիևայի դպրոցներում դասաւանդութիւնը կատարվում է ուկրայնեան լեզուով, երեխաները աղօթում են մայրենի լեզուով:

Պաշտօնից հեռացված Գրէյսի և կնոջ դէմ՝ կասկածի հիման վրա յարուցված դատաստանական քննութիւնը՝ արգելված պատժական միջոցների գործադրութեան առիթով և որը նպատակ ունի արդարացնելուց յետոյ էլ քննութիւն կատարելու կարգապահութեան տեսակէտից՝ պիտի պարզէ, թէ գործադրո՞ւմ էր արդեօք Գրէյսը դպրոցական կանօնադրութեամբ արգելված մարմնական պատիժները:

Եթէ այդ ապացուցվի, այն ժամանակ Գրէյսը կը պատժվի: (Հ. Գ.)

Պարիզ, 30 հոկտեմբերի

Հավասը հերքում է այն լուրերը, թէ իբր կառավարութիւնը քայլեր է արել՝ համոզելու ֆինանսական հաստատութիւններին՝ յետ վերցնել արտասահմանեան մի քանի բանկերից իրանց փողերը: (Հ. Գ.)

Կալէ, 30 հոկտեմբերի

Փիշերս կատաղի մրրիկը ջրասոյզ արեց շատ ձկնորսական նաւակներ. 30 դիակ ափ ձգեց ջուրը: (Հ. Գ.)

Սէրաէվ, 30 հոկտեմբերի

Սէյմի նիստում խօրվատ Վեսէլիգիչը հարցրեց պրեզիդիումին, թէ ինչպիսի՛ քայլեր են անվելու մաջարական դեսպօտական ոտնձգութիւնների դէմ Բօսնիայում: Սէյմի նախագահը պատասխանեց, որ այդ գործում նա կօմպետենտ չէ: (Հ. Գ.)

Զագրեբ, 30 հոկտեմբերի

Սերբ-խօրվատական միութեան կօնֆերէնցիան 31 ձայնով ընդդէմ 4-ի որոշեց յանձնարարել գործադիր յանձնաժողովին, համաձայն բան Տօմաշիչի առաջարկութեան, բանակցութիւններ սկսել բանի հետ մեծամասնութեան կազմի և աշխատանքների ծրագրի մասին Ունգարիայի հետ կապված ունիայի հողի վրա, միաժամանակ պայման դնելով որ մաջարական լեզուն պէտք է անարգել գործադրվի խօրվատական երկաթուղային ծառայութեան մէջ: Գիւղացիական կուսակցութիւնը նոյնպէս յարված է միանալ մեծամասնութեանը, որ ուզում է աշխատել: (Հ. Գ.)

Մադրիդ, 30 հոկտեմբերի

Պատգամաւորների պալատ: Բանուորների գործադուլի մասին ուղղված հարցապնդման քննութեան ժամանակ մինիստր-նախագահը յայտնեց, որ նա պնդում է տարբերութիւն դնել տնտեսական ու յեղափոխական գործադուլների միջև. առաջինը թոյլատրելի է, իսկ երկրորդը հանդուրժելի չէ: Կառավարութիւնը պարտաւոր է ճնշել այդպիսին թէկուզ զինուորական ույժ հարկաւորվի: Ոչ թէ երկաթուղագծեր փչացնելով և բռնի գործողութիւններով, այլ սոսկ օրէնքի միջոցով կարող են բարելաւել բանուորները իրանց նիւթական դրութիւնը: (Հ. Գ.)

Մադրիդ, 31 հոկտեմբերի

Պալատ: Սօցիալիստների պարագլուխ Իգլէսիասը յայտնեց, որ սօցիալիստները միացել են հանրապետականների հետ՝ միապետութիւնը տապալելու համար: (Հ. Գ.)

Ադիս-Աբէբա, 31 հոկտեմբերի

Ռուսաց դեսպանը ընդունվեց գահաժառանգ պրինցից և յանձնեց իր հաւատարմագրերը: (Հ. Գ.)

Պէկին, 30 հոկտեմբերի

«Դօմինգունբաօ» լրագիրը տպագրել է պարլամենտական միութեան պատգամաւորների հաշիւը, որ կառավարութեան վրա պատասխանատուութիւն է դնում, եթէ մինչև 1913 թիւը տեղի ունենան այնպիսի պատահարներ, որոնք վտանգեն պետութեան ամբողջութիւնը:

«Բէյցզին-Ժիբաօ» լրագիրը խորհուրդ է տալիս պատգամաւորներին ձեռք բերել պարլամենտի իսկական ֆունկցիաներ, պատասխանատու մինիստրների կաբինէտ և իրական բիւջէտային իրաւունք: (Հ. Գ.)

Իրկուտսկ, 31 հոկտեմբերի

Վաճառական Կրավէցի հաշւով կառուցված քարէ ընդարձակ տանը բացված է կոյրերի ապաստարան, որի համար կառուցողը յատկացրել է 35,000 րուբլի: (Հ. Գ.)

Լօնդօն.—Ուէլսում անկարգութիւնները ճնշելու ժամանակ վիրավորվեցին 120 մարդ: Անկարգութիւնների տեղը ուղարկվեցին նոր զօրքեր: Դրութիւնը չափազանց լուրջ է:

(«Б.»)

Վիէննա.—Հաղորդում են, որ Ռուսաստանի մերձեցումը Աւստրիայի հետ պայմանաւորված է բարօն Էրենտալի հրաժարականով: («Б.»)

Պետերբուրգ.—Խոմեակովը Գուչկովի ընտրվելը համարում է հոկտեմբերեանների ինքնասպանութիւն:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը յետ վերցրեց համալսարանական կանօնադրութիւնը: («Б.»)

Կիեվ.—Անյայտացաւ գլանակների յայտնի գործարանատէր Դուվանը: Նրա պարտքը հասնում է կէս միլիօնի: («Б.»)

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վիէննա, 30 հոկտեմբերի

Աւստրիական պատգամաւորութիւն։ Պատասխանելով Կրամարժին, որ պաշտպանեց նէօսլավիզմը գերմանական նացիօնալիստ Դոբէրնիկի յարձակումներից, իշխան Շարցենբէրգը ցաւ յայտնեց, որ Կրամարժը, փոխանակ հանդէս գալու իբրև ռուս պատրօնատ նէօսլավիզմի օգտին, չէ խօսում ի պաշտպանութիւն աւստրօսլավիզմի։ Հաբսբուրգեան միապետութիւնը աննեկսիայից յետոյ հանդիսանում է հարաւային սլաւօնական ամենամեծ պետութիւնը. անհրաժեշտ է տնտեսապէս և հոգեպէս կապել հարաւ-սլաւօններին միապետութեան հետ. անհրաժեշտ է միապետութեան բուն ներսում հիմնել հարաւ-սլաւօնական ժողովուրդների հոգևոր կենտրոն։ Հռետորն առաջարկում է ստեղծել կենտրոնական տրիալիզմ, որի գոյութեամբ ընդհանուր գործերը կը քննվեն առանձին ընդհանուր օրէնսդրական հաստատութեան ձեռքով։ Նա կը հանդիսանար կենտրոնական իշխանութեան և ֆեդերալիզմի ոսկէ միջին ուղին։

Ունգարական պատգամաւորութիւն։ Շարունակվում է արտաքին գործերի մինիստրութեան բիւջէի քննութիւնը։ Տիսսան յայտնում է. «Մենք պէտք է հաշւի առնենք այն իրողութիւնը, որ որոշ ժամանակ յետոյ Ռուսաստանը, իր ոյժերը ժողովելով, կը փորձէ իր հզօր ազդեցութիւնը երևան հանել Բալկանում։ Հարցը միայն նրանումն է, թէ ցոյց կը տա՞յ արդեօք դրա վերաբերեալ Ռուսաստանը ագրեսիվ գործողութիւնների տենդէնց թէ՞ կը մասնակցէ մեր սկսած բարենորոգչական գործին։ Այդ պատճառով մենք պէտք է պատրաստ լինենք ամեն պատահականութեան համար, որովհետև սեփական ոյժի գիտակցութիւնը կապահովէ մեր քաղաքականութեան աջողութիւնը»։ Դատխանին հանդէս է գալիս բալկանեան պետութիւնների հետ մաքսային միութիւն կապելու մտքի դէմ։

«Ցէյտը» մի առաջնորդող է նուիրել Մասարիկ-Էրենտալի բանակռւին և գտնում է, որ մինիստրի պատասխանը բոլորովին անգոհացուցիչ է։ «Էրենտալն արդէն երեք անգամ խօսեց Վասիչի գործի մասին. նա ժխտեց լոկ Ֆորգաչի և Վասիչի անձնական յարաբերութիւնների իրողութիւնը, սակայն բնաւ չը հերքեց Մասարիկի աւելի կարևոր մեղադրանքները, թէ Վասիչը միսիայի պաշտօնեաների օգնութեամբ և յանձնարարութեամբ կեղծեց Ֆրիդիւնգօվեան փաստաթղթերը և նրան պատրաստեցին իբրև կեղծ վկայի Ֆրիդիւնգի գործի համար. մինիստրը չը պաշտպանվեց նմանապէս փաստաթղթերը ներկայացնելու պահանջի ժամանակ»։ (Հ. Գ.)

—

Զագրէբ, 31 հոկտեմբերի

Խօրվատական բանի պաշտօնական լրագիրը պարսաւում է կօալիցիան Մասարիկին շնորհաւորական հեռագիր ուղարկելուն համար։ Սերբ-խօրվատական կօալիցիայի լիազօրների կօնֆերենցիան բան Տօմաշիչի հետ անաջող եղաւ։ Տօմաշիչը մեկնեց Վիէննա խորհելու քաղաքական դրութեան մասին։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պօլիս, 31 հոկտեմբերի

Հետևեալ տարվայ բիւջէն կազմված է $6^1/_2$ միլիոն թիւրքական ֆունտ դեֆիցիտով։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 30 հոկտեմբերի

Արձակուրդով մեկնեց և, լուրերին նայած, այլ ևս չէ վերադառնալու անգլիական դեսպան սըր Ջէրալդ Լօուտէրը։

Վերջացան Կումանօվօ-Էգրիպալանկա երկաթուղագծի հետազօտութիւնները։ Հաւանօրէն գծի կառուցումը կանցնէ արևելեան երկաթուղիների ընկերութեան ձեռքը։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս.—Բ. Դուռը յայտագիր ուղարկեց պարսկական կառավարութեանը, որի մէջ ասված է, որ թիւրքաց զօրքերը ոյժով պարսկական հողեր չեն գրաւել, և որ սուտ են լրագրական տեղեկութիւնները դրա մասին։ Թիւրքիան ցաւակցութիւն է յայտնում, որ պարսկական կառավարութիւնը նշանակութիւն է տուել այդ լուրերին, չը ստուգելով այդ տեղեկութիւնները։

Նոյն հաւաստիացումներն արեց Բ. Դուռը և ռուսական դեսպանութեանը։ («Р. В.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Լօնդօն, 31 հոկտեմբերի

Պարսից կառավարութեան բանակցութիւնները պարսկական բանկի հետ շարունակվում են։ Բանկը պատրաստ է տալ աւանսով դրամ։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 31 հոկտեմբերի

Ստացված է յուզումնալից տեղեկութիւն Սալմաստում ապրող ռուսահպատակների նկատմամբ, որոնց սպառնում են քիւրդերը։ Քիւրդերը քարուքանդ արին Սալմաստի շրջանի մի քանի գիւղեր։

Ուրմիայի մօտ սպանված են մի քանի թիւրք զինուորներ։ Օսմանեան գեներալ հիւպատոսը այցելեց Թաւրիզի գեներալ-նահանգապետին։ (Հ. Գ.)

—

Ուրմիա, 31 հոկտեմբերի

Թաւրիզից ժամանեց մաքսային պաշտօնեաներից մէկը, ափիոնի և ոգելից ըմպելիների վրա հարկ դնելու համար։ Թիւրքական հրահանգի համաձայն քիւրդերը հաւաքվեցին թիւրքերի գրաւած՝ Ենգելիի շրջանի գիւղերում։

Սէրդէշ շրջանը եկաւ թիւրք զինուորների մի գունդ։ Թիւրքերը սպասում են օժանդակ ոյժերի։

Ուրմիայի նահանգապետը բացատրեց Պետերբուրգի Գործակալութեան թղթակցին պարսկական զօրքի դժուարին կացութիւնը քիւրդերի դէմ կռիւ մղելու գործում. քիւրդերի յարձակումները կրում են ասպատակային բնոյթ և անսպասելի կերպով են կատարվում այլ և այլ տեղերում. նահանգապետի տրամադրութեան տակ միայն 2,000 հետևակ և հեծեալ զինուորներ կան. քիւրդական գիւղերի խաղաղ ազգաբնակութիւնը թիւրքերի հրահանգով աջակցութիւն է ցոյց տալիս քիւրդերին. անաջողութեան դէպքում քիւրդերը ծածկվում են թիւրքերի գրաւած շրջաններում, որտեղերում արգելված է պարսկական զօրքերին մուտք գործել։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 30 հոկտեմբերի

Պարսկական նախկին շահ Մահմէդ-Ալին դիմեց լրագիրներին խնդրելով հերքել այն տեղեկութիւնը, թէ իբր նա եկել է զուարճանալու դիտաւորութեամբ։ Մահմէդ-Ալին յայտնում է, որ Վիէննայում նա բացառապէս ծանօթանալու է ժամանակակից մեծ քաղաքի կառավարութեան ձևի հետ։ Հոկտեմբերի 29-ին նախկին շահը այցելեց քաղաքային ինքնավարութիւնը և ներկայ եղաւ համայնական խորհրդի նիստին։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 26 հոկտեմբերի

Նախկին շահ Մահմէդ-Ալին այսօր ծպտեալ ժամանեց Վիէննա։ Կայարանում նրան ոչ պաշտօնապէս դիմաւորեցին պարսկական ընդհանուր հիւպատոսութեան անդամները։ Մահմէդ-Ալին իջևանեց հիւրանոցում, որի ոստիկանական թերթիկում արձանագրեցին մահմէդ-Ալի անունով՝ մասնաւոր անձն Թէհրանից։

Նախկին շահը դիտաւորութիւն ունի մի շաբաթ անցկացնել Վիէննայում։

Այստեղ շատ են հետաքրքրվում նրանով։ Լրագիրները տպում են ամենագաղտնի մանրամասնութիւններ նրա կեանքից։

Մի անձն շահի շքախմբից ասել է «Neue Fr. Presse» լրագրի թղթակցին, որ շահի տեսակցութիւնը Զիլլ-Սուլթանի հետ քաղաքական ոչ մի նպատակ չունի։

—

Վիէննա.—«Neue Freie Presse»-ն հաղորդում է պարսկական աղբիւրից, որ իբր թէ նախկին շահը արտասահման ուղևորվելով՝ քաղաքական նպատակներ ունի և պատրաստվում է հարուածել ներկայ պարսկական ռէժիմը։ Լրագիրը հաւաստացնում է, որ իբր թէ նախկին շահի պլանները յայտնի են ռուսաց կառավարութեան։ Արդէն Օդեսսայում, Մահմէդ Ալին, լրագրի խօսքով, դաւեր էր լարում այժմեան պարսկական ռէժիմի դէմ։

Արտասահմանում Մահմէդ-Ալին կը հանդիպի Զիլլի-Սուլթանին և պարսկական նախկին զինուորական մինիստր Բօհաթուր-էմիրի հետ, որ ապրում էր ամառը Վիէննայի մօտ։

Պարսկաստանը լաւ ճանաչող ունգարական արևելագէտ պրօֆէսօր Վամբէրի պնդում է, որ նախկին շահը Պարսկաստանում աւելի շատ կողմնակիցներ ունի, քան կարծում են։ Շատ կարելի է, այդ ճանապարհորդութեան նպատակն է նախապատրաստել դիմադրութիւն ժամանակակից ռէֆօրմներ մտցնելու դէմ Պարսկաստանում Նասր-իւլ-Միւլք խնամակալի կողմից, որը այժմ Լօնդօնից վերադառնում է Թէհրան։

—

Բերլին, 26 հոկտեմբերի

Նախկին շահի ճանապարհորդութիւնը այստեղ շատ մեծ հետաքրքրութիւն է առաջացնում և բազմաթիւ գուշակութիւններ։ Մամուլը տեսնում է այդ ճանապարհորդութեան մէջ Ռուսաստանի ինտրիգները, որը իբր թէ նպաստում է Մահմէդ-Ալիի ջանքերին՝ վերադարձնել գահը։ Այն կարծիքն է յայտնվում, որ այդ ճանապարհորդութիւնը կապ ունի առաջիկայ լուրջ քաղաքական դէպքերի հետ Պարսկաստանում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ՋԱԼԽՈՒՇԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

—

Նոր-Նախիջևանի հայ հասարակութիւնը հոկտեմբերի 10-ին տօնեց իր զաւակներից մէկի՝ Գր. Ջալխուշեանի հասարակական գործունէութեան 25-ամեակը։

Համակրելի է նա իր տեսակի մէջ. համակրելի, որովհետև Գր. Ջալխուշեան իր երիտասարդական, ուսանողական քաղցր, ոսկի գաղափարները չէ ծախել կեանքի մէջ։ Համալսարանական կարմիր երազներով, հասարակական բարի և օգտաւէտ տենչերով նա եկել է իր ծննդավայրը՝ Նոր-Նախիջևան՝ իր այդ երազները կեանքի մէջ իրագործելու. և նրան չեն կարողացել, շատ-շատերի նման, խաբել ոսկու տոպրակները, կեանքի ցոփ, գրաւիչ, բայց խաբուսիկ ցանկութիւնները և նա առաջ է տարել իր գաղափարները ամբողջ քառորդ դար նոյն թարմութեամբ, նոյն պարզութեամբ, նոյն ոգևորութեամբ և նոյն անկեղծութեամբ, ինչ որ ուսանողական շրջանում։

Եւ երբ Նոր-Նախիջևանի ժողովուրդը ոյժ է նկատել նրա մէջ, նրա օգնութեանն է կարօտել և իր քուէներով կանչել է նրան գործունէութեան, նա թողել է ամեն բան և բաւականութեամբ եկել է իր քաղաքացիական պարտքը կատարելու. բացի դրանից նա երկար տարիներ լսեցրել է իր ձայնը «Մշակի» էջերից բաւական հետաքրքրական յօդուածներով, և այդ յօդուածները միշտ կամ յիշեցրել են մարդկանց իրանց պարտականութիւնները, կամ բողոքներ են եղել զանազան անարդարութիւնների դէմ և կամ թէ կոչեր են եղել քաղցածին և ծարաւին օգնելու մասին։

Նա սիրել և բաւականացել է հասարակական գործունէութեամբ...

Նա իր անձնական երջանկութիւնը զոհել է ժողովրդի երջանկութեանը։

Ահա ամենից համակրելի կէտը յօբելեարի մէջ։

Եթէ յօբելեարը խոշորագոյն դիրք չէ գրաւել, սակայն մեր նիւթապաշտ և մռայլ կեանքում չափազանց գնահատելի են այդպիսի գործիչները։

Երանի թէ դրանցից շատ լինէին. բայց նրանք չը կան, նրանք քիչ են...

Իսկ եղածներին անպայման հարկաւոր է տալ իրանց գնահատութիւնը և արժանի յարգանքը։ Թող մեր ուսանողները, ցրվելով գաւառները, կուլ չը գնան կեանքի փորձանքներին և մոռացնել չը տան իրանց գոյութիւնը...

Թող այդպիսիներին միշտ օրինակ լինեն Ջալխուշեանները։ Ս. Քր. Ասլանեանց

Աստրախան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Կարս, 25 հոկտեմբերի

«Մշակի» № 228-ում յայտնեցինք որ մի անծանօթ երիտասարդ կեղծ չեկով տեղիս մանր վարկի կրեդիտ բանկից ստացաւ 1,500 ր. և անյայտացաւ։ Այդ անսպասելի դէպքը ահագին իրարանցում առաջ բերեց ժողովրդի մէջ։ Խուզարկու ոստիկանութիւնը գնաց Ալէքսանդրօպօլ և գործ դրեց իր բոլոր ճարպիկութիւնը, բայց դատարկ վերադարձաւ։ Ասպարէզ մտաւ մի նոր Լըկօկ՝ Արշակ Դաբբինեանց։ Սա նախապէս բանկի վարչութիւնից լսելով գործի մանրամասնութիւնը և փողը տանող անյայտ երիտասարդի դէմքի, հագուստի նկարագրութիւնը՝ վեր առնելով իր հետ վարչութեան անդամ Զ. Զամբազեանցին՝ գնում է Ալէքսանդրօպօլ, ուր նրա նախաձեռնութեամբ ոստիկանական պաշտօնեաները կէս գիշերին շրջապատում են կասկածելի երիտասարդի տունը, բաց են անել տալիս դուռը, զարթեցնում են երիտասարդին և զանազան միջոցներով ստիպում, որ 18 տարեկան անփորձ երիտասարդը խոստովանում է և պատմում գործի մանրամասնութիւնը և ներկայացնում տարած փողերից 588 ր. և մնացած փողի տեղն էլ ցոյց տալիս։ Հետևեալ օրը երիտասարդին բերում են Կարս։ Այժմ այդ գործի պատճառով որպէս յանցաւորներ բանտարկված են՝ գլխաւոր հաշւապահ Մ. Յակովլեանց, Ս. Ազամեան. կեղծ չեկով փող ստացողը կոչվում Գէորգ Մուրադեան և ոմն Մկրտչեան, որի մօտից դուրս է եկել 900 ր.։ Գործը յանձնված է քննիչին։

Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեան

—

Սլաւեանսկ (Խարկ. նահ.), 23 հոկտ.

Գիշերը ժամը 9-ին, Սաբօրնի Պլօշչադ կոչված հրապարակում, Արդուին քաղաքացի (Բաթումի շրջան) եղբարք Աւագեանների պատրաստի ոտնամանի խանութում տարօրինակ հրդեհ առաջացաւ մի սարսափելի պայթիւնով, որը յօդս ցնդեցրեց ամբողջ խանութը՝ ամեն ինչ տակն ու վրա անելով և Աւագեանների երեք եղբայրներին էլ զոհ տանելով. եղբայրներից երկուսը բոլորովին այրված էին և միմիայն մասնկոյտներն էին մնացած, իսկ երրորդը մնալով հողակոյտի տակ՝ անշնչացած էր։

Աւագեանները ընդամենը մի ամիս է սկսած էին այստեղ առևտուր անել։ Այս դէպքը շատ հանելուկային էր։ Ժողովուրդը զանազան տեսակ մտքեր է արտայայտում. մութը դասակարգը զրուցում է, թէ իրանք Աւագեաններն են պարապելիս եղել պայթուցիկ նիւթերով. իսկ բանիմաց դասակարգը խօսում է, թէ թշնամութեան գործ է. հաւանական է վերջինը, որովհետև Աւագեանները շատ աժան գներով էին ծախում ապրանքը։ Դիակները տեղափոխեցին հիւանդանոց. հեռագրեցին ծնողներին և եղբայրներին Սեվաստօպօլ. քննութիւն է կատարվում։ Ս. Մելիք-Մամիկոնով

Վելիկօկնեաժսկի կայարան, 25 հոկտ.

Այսօր, հոկտեմբերի 25-ին, կայարանի մէջ տարածվեց մի սարսափելի լուր։ Ստացված էր մի սնդուկ բագաժով, որ ուղարկված էր Մօսկվա կայարանից սեպտեմբերի 24-ին և ստացված էր Վելիկօկնեաժսկի հոկտեմբերի 2 ին. այս սնդուկը շատ ժամանակ մնալով բագաժի մասում՝ սկսում է հոտ արձակել. կայարանի կառավարիչը կասկածելով այս սնդուկի վրա՝ հրամայում է բաց անել, որի մէջ լինում է երիտասարդ մի դիակ, մօտ 27 տարեկան հասակում, երեք տեղից վիրաւորված. նշաններ կային, որ նա խեղդամահ է արված. կերպարանքից չէր լինում ճանաչել՝ թէ դժբաղդն ինչ ազգութեան է պատկանում։

Գ. Պօղոսեան

—

Ջաջուռ, 22 հոկտեմբերի

Շիրակի գաւառում որքան որ աւելանում է ծխ. դպրոցների թիւը հետզհետէ բացվող դպրոցներով, այնքան էլ պակասում են այլևայլ անյարգելի պատճառներով և կիսաշէն մնում։ Գաւառի մի քանի գիւղերում ծխ. դպրոցները փոխեցին պետականի, իսկ մի քանի գիւղերումն էլ այլևայլ խոչընդոտների պատճառով դպրոցական շէնքը մնացել է կիսակատար. օրինակ՝ աղ-Քիլիսեցի տէր-Խաչատուրը բարի նախանձով լցված դէպի Ջաջուռցոց սեփական ջանքերով ու արդիւնքով կառուցված դպրոցը՝ ինքն էլ ջանք է արել անցեալ տարվանից իրանց գիւղում շինել ուսումնարան. շնորհիւ յիշեալ քահանայի եռանդուն ջանքերի՝ սկսված է անցեալ տարվանից և կիսաշէն մնում է. մի քանի անձնաւորութիւններ դպրոցի այդ գործը խանգարելու նպատակով ամեն կերպ աշխատել են հակառակ գործել քահանայի դէմ և համոզել հասարակութեան, որ յետ կենայ դպրոցի շինութեան գործից և դրամական նպաստ չը տայ։ Այդ պատճառով էլ երկու տարի է, շէնքը մնացել է կիսատ։ Արդեօք այդ անձնաւորութիւնները պիտի յետ կենան իրանց քամնելի ու դատապարտելի արարմունքից, որպէսզի կարելի լինի հարիւրաւոր մանուկներին փրկել փողոցային ազդեցութիւններից։ Գաւառի դպրոցներում սկսված է դասատուութիւնը և շուտով պիտի ելնի վիճակի յաջորդը շրջելու դպրոցները։

Տէր-Սարգսեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Պետերբուրգ, 29 հոկտեմբերի

Նախագահում է իշխան Վօլկօնսկին։

Շարունակվում են տարրական դպրոցների օրինագծի վիճաբանութիւնները։

Հայր Ստանիսլավսկին յայտնում է, որ եկեղեցական դպրոցը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը հպատակեցնելու ձգտումը կարող է սրբապղծութիւն համարվել պետական ուղղափառ եկեղեցու իրաւունքների նկատմամբ։ Եկեղեցական դպրոցը իր բնոյթով պէտք է լինի անկախ և չէ կարող ստորկանալ որևէ վարչութեան։ Ոչ մի հիմնական շարժառիթ չը կայ վերացնելու եկեղեցական դպրոցները։

Վեազիգինը ընդգծում է, որ ժողովրդական կրթութեան մասնաժողովի և Դումայի կարծիքները տրամագծօրէն հակառակ են իրար։ Հռետորը, քննադատելով ժամանակակից հասարակութիւնը, դրականապէս խօսում է ժողովրդական կրթութիւնը հասարակական կազմակերպութիւններին յանձնելու դէմ, ինչպէս այդ առաջարկում է դպրոցական մասնաժողովի նախագիծը, որի հիմնական կէտերը միանգամայն համանիշ են կրթական լիգայի ծրագիրների հետ, որոնք առաջարկում են հանրակրթական դպրոց։ Ուսուցիչները համակված են քաղաքական հոսանքով, հեռացրել են առողջ դատողութիւնը։ Չէ կարելի ժողովրդական կրթութիւնը տալ այդպիսի անձանց (ծափեր աջից)։

Իշխան Կուրակինը, գտնելով որ դպրոցը ամենից առաջ պէտք է գտնվի քաղաքականութիւնից դուրս, պաշտպանում է իր առանձին կարծիքները, որոնք ներկայացված են գրաւոր կերպով։

Բարօն Շիլլինգը կարծում է, որ ստորին դպրոցներում դասաւանդութիւնը պէտք է լինի մայրենի լեզուով։ Պրիբալտիկ նահանգների փորձը ցոյց տուեց, որ ոչ լատիշները, ոչ էստօնները ռուսներ չը դարձան դպրոցներում ռուսերէն սովորելուց։

Չխեիձէն յարձակվում է Դումայի մեծամասնութեան վրա, որ ընդունակ է հաստատել ընդհանուր արբեցողութիւն, և ոչ ընդհանուր կրթութիւն, և ամբողջովին միանում է ժողովրդին, որ իր անէծքներն է ուղղում Դումայի մեծամասնութեանը։ Ի զուր մեծամասնութիւնը փորձում է ծածկել իր ապիկարութիւնը պետականութեան գաղափարով։ Յանուն այդ պետականութեան մոռացել են Քրիստոսին, գործադրել են ինկվիզիցիաներ։ «Տարրական դպրոցի խնդիրը յեղափոխութեան դէմ կռիւ յայտարարելը առաջադրելով և աշխատելով նրան դարձնել մեծամասնութեան շահերի իդէօլօգիայի պաշտպանութիւն, դուք (դիմելով կենտրոնին),—ասում է հռետորը,—վճռում էք կռիւ յայտարարել Ռուսաստանում ապրող 108 միլիոն այլազգիներին։ Դուք մոռանում էք, որ մայրենի լեզուն ձեռնտու չէ, նոյնիսկ ոչ հոկտեմբերեաններին «պլատֆորմա»-ի, որ բարձրից բղխող կարգադրութեան համաձայն կարելի լինի թաղցնել պօրտֆելի մէջ»։ Ի նկատի ունենալով կենտրոնի այդ ձգտումները, հռետորը կոչ է անում այլազգիներին միանալ ամենասերտ կերպով ընդհանուր կռւի համար և կշտամբում է լեհերին, որ յաճախ, չը նայած իրանց կուլտուրականութեան, ազգային շահերը պաշտպանելու իրանց ձևերի մէջ միանում են աջակողմեանների հետ (երկար ծափեր ձախից)։

Տիմօշկինը բողոքում է տարրական դպրոցը զեմստվօյի տեղական ոյժերի ձեռքը յանձնելու դէմ, զեմստվօյի՝ ուր այժմ էլ կատաղի կռիւ է մղվում քաղաքական կուսակցութիւնների միջև։ Պէտք է բարելաւել եկեղեցական դպրոցը, այլ ոչ թէ ոչնչացնել։

Զեկուցանող Ֆօն-Անրէպը բանաձևում է խօսակցութիւնները, բոլոր առարկութիւնները ստորաբաժանում է երկու կաթէգօրիաների. առաջինը վերաբերում է տեղական ոյժերին հաւատ չընծայելուն։ «Ռուսական ամբողջ առաջադիմութիւնը, սկսած 60 ական թւականներից, պայմանաւորվում է տեղական զեմստվային մարդկանց աշխատանքով, որոնք աշխատանքի մէջ դնում են իրանց հոգին, գիտութիւնը և կարողութիւնը։ Չէ կարելի քննադատաբար վերաբերվել դէպի Ռուսաստանի երեք քառորդը (հռետորը դիմում է աջակողմեաններին) միայն այն պատճառով, որ նրանք համաձայն չեն մեր նեղ կուսակցական տեսակէտի հետ» (ծափեր կենտրոնից և ձախից)։ Առարկութիւնների երկրորդ կաթէգօրիան վերաբերում է եկեղեցա-ծխական դպրոցների աւտօնօմիան պաշտպանելուն։ Եկեղեցական դպրոցներին ոչ ոք չէ ձեռնմխում։ Ֆօն-Անրէպը վերջացնում է. «Ռուս մարդիկ միշտ, երբ հայրենիքի գլխին կախվել է մի որևէ խոշոր սպառնական վտանգ, շտապել են մոռանալ անձնական մանր հաշիւները, միացել են իրար հետ և ընդհանուր ոյժերով հասել են ցանկալի նպատակին։ Առաջարկվող նախագծի մէջ ոչինչ սպառնալի չը կայ, բայց կայ ինչ-որ աւելին, որ պէտք է բարձրացնէ հայրենիքը։ Մի՞թէ այդ գործի առաջ մենք չենք կարող լինել հասարակ ռուսներ, առանց կանգնելու կուսակցական խնդիրների վրա...» (երկար ծափեր կենտրոնից)։

Ձայների առաւելութեամբ — հակառակ սօց. դեմօկրատների և աջակողմեանների — որոշվում է անցնել հերթական գործերին։

Երեկոյեան նիստ

Նախագահում է իշխ. Վօլկօնսկին։

Դուման ձեռնարկում է նախագահի ընտրութեան։

Պետրօվ 3-րդը աշխատաւորականների և Գեգէչկօրին՝ սօց. դեմօկրատների անունից յայտնում են, որ իրանց ֆրակցիաները, իբրև հեռաւորականներ, ձեռնպահ են մնում ընտրութիւններին մասնակցելուց, քանի որ մեծամասնութեան կողմից փոքրամասնութեան շահերը ոտնահարվում են։

Գաղտնի քուէարկութեամբ Գուչկօվը ստանում է 201 սպիտակ և 137 սև գնդակ։

Հոկտեմբերեանները և նացիօնալիստները ծափահարում են։

Նախագահի օգնականներ ընտրվում են իշխան Վօլկօնսկին 261 (48 սև), և Կապուստինը 199 ձայնով (110 սև)։

Բուռն ծափեր կենտրոնում, նացիօնալիստների և աջակողմեանների մէջ։

Աւագ օգնական Կապուստինի հրաժարվելու պատճառով մնում է իշխան Վօլկօնսկին։

Աւագ քարտուղար 154 ձայնով ընտրվում է Միկլեաևը։ (Հ. Գ.)

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

—

Պետերբուրգ, 23 հոկտեմբերի

— Այլ ևս չը կան իլլիւզիաներ։

Այսպէս բացագանչեց Պուրիշկևիչը, երբ ժող. լուս. նոր մինիստր Կասսօն արտասանեց իր անդրանիկ ճառը ռուսաց պարլամենտի տրիբունայից։

Այո, այլ ևս չը կան ձախակողմեանների այն իլլիւզիաները, որոնցով աշխատում էին նրանք տարվել և համոզել իրանց, որ Կասսօն Շվարց լինել երբէք չէ կարող...

Չը կան և այն իլլիւզիաները աջակողմեանների համար, որոնցով անհանգստանում էին նրանք, թէ Կասսօն ինչո՞ւ չը պէտք է Շվարց լինի։

Մի վայրկեան էր հարկաւոր այս բոլոր իլլիւզիաներին ցաք ու ցրիւ տալու համար, այսինքն այնքան ժամանակ, մինչև որ նա՝ Կասսօն՝ մի ակնթարթային դիպուածով վերցնէր իր դէմքի դիմակը։

Համառուսական լուսաւորութեան դիմակահանդէսում երևան եկող մինիստր Կասսօյի դիմակը չափազանց անթափանցիկ էր և նոյն իսկ տարօրինակ։ Նա մի օրիգինալ երևոյթ էր մինչև այսօր։

Եւ տանջում էր բոլորին...

Չը գիտէին, թէ ո՞վ կարող էր մօտենալ նրան, որ խաբված չը լինէր իր յոյսերի և իղձերի մէջ։

Ձախակողմեանները ուզում էին հաւատալ, որ այդ դիմակաւորը մի գեղեցիկ օրիորդ է, նոր կեանքի յոյսերով լցված, որ նրան պէտք է մօտենալ և շնորհաւորել իր գալուստը...

Իսկ աջակողմեանները հապա...

Պուրիշկևիչը իր բարեկամ Մարկով 2-րդի ուսն էր ծեծում.

«Հայդա Մարկով, հոգիս, ինչպէս են քո կարծիքները. մի՞թէ նա իսկապէս օրիորդ է… ես վախենում եմ նրան մօտենալուց, աչքի առաջ ունենալով առեանգման պատասխանատու հետևանքները։ Ես ուզում եմ իմանալ, թէ ով է դա։ Եթէ կնոջ… պէտք է զանազան միջոցներով զինվել և այնպէս մօտենալ. Իսկ, եթէ… տիկի՞ն, թէկուզ՝ անճոռնի, ծամածռված դէմքով, ես ուրախ-ուրախ կը վազեմ մօտը, կը սեղմեմ նրա ձեռքը և կասեմ. «Հոգուս հատոր, ինչու առաջուց չը յայտնեցիր ինձ քո գալուստդ. չէ՞ որ վերջին շաբաթները ես չը քնելուց միանգամայն ջղայնացել եմ»։

Եւ այսպէս բոլորն էլ կասկածանքների մէջ էին, բոլորն էլ մի տեսակ իլլիւզիաներով էին կերակրվում։

Բայց այսօր, երբ ամբիոն բարձրացաւ, բոլորի համար այդ ուշադրութեան առարկան և առաջուց շարադրած տետրը դնելով իր առաջ՝ սկսեց կարդալ և ապա աջ ձեռքի մի հարուածով դէն շպրտեց դիմակն ու գոչեց՝

— Ահա և ես…

Պուրիշկեվիչը կարծես ասեղների վրա լինէր նստած, այնպէս սկսեց վեր վեր թռչել, ծափահարել և գոռալ.

— Այլ ևս չը կա՛ն իլլիւզիաները… կեցցէ մեր Շվարցի հարազատ յաջորդ Կասսօն։

Եւ նստեց իր համախոհների ողջոյնները կարգով ընդունելու համար։

Մինչ այդ, հիասթափված ձախակողմեանները թողին դահլիճը և մտնելով բուֆէտ, գարեջրի թոյնով սկսեցին մեղմել իրանց զգացվող ու ցնցվող ջղերը։

Խեղճ մարդիկ։ Մ. Ազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիս հիւր եկած երկու նոր թեմական եպիսկոպոսներ՝ Կարապետ Տէր-Մկրտչեանց և Մեսրոպ Կիւլեսէրեան՝ ինտելիգենտների մի շրջանում արին զեկուցումներ իրանց թեմերի վիճակի մասին։ Ատրպատականի թեմը ներկայումս թէ կրթական և թէ տնտեսական մեծ կարիքների մէջ է։ Հայ ժողովրդի մի մասը ունի դպրոցներ, իսկ մեծագոյն մասը զուրկ է կրթարաններից։ Կան շրջաններ, ուր հայերը մոռացել են մայրենի լեզուն։ Աջակցութեան կարօտ են թէ Սալմաստի, թէ Ուրմիի և թէ Ղարադաղի շրջանները։ Գաղատիայի կամ Էնկիւրիի թեմում հայերը թիւրքախօս են։ Նրանց մեծագոյն մասը մօտ 80% կաթոլիկներ են, իսկ փոքր մասը լուսաւորչական։ Թէ առաջինները և թէ վերջինները զուրկ են կանոնաւոր դպրոցներից։ Միայն վերջին ժամանակներում նկատվում է հայերի մէջ ցանկութիւն՝ ձեռք բերելու գրագիտական ուսում մայրենի լեզուով։

◆ Մեզ հաղորդում են, որ Մեծ-Ղարաքիլիսայում բացված զամբիւղագործութեան դասընթացքը վերջացրեց իր առաջին շրջանը։ Սովորողների թիւը եղել է 26։ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութիւնը, որ գործի գլուխ է կանգնել, մտադիր է զամբիւղագործութեան համար պիտանի ուռենիների տնկարաններ բանալ մի քանի տասնեակ կէտերում։

◆ Կարսի հանդէսների առիթով մեկնեց Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսը։

◆ Կիրակի օրը հանդիսաւորութեամբ օծվեց Քաշվէթի եկեղեցին ներկայութեամբ Վրաստանի էկզարխի, մամուլի և զանազան վրացական հաստատութիւնների ներկայացուցիչների։ Եկեղեցու հիմնադրութիւնը շատ հին ժամանակից է, այնուհետև նա նորոգվել է մի քանի անգամ և այժմ հիմնական վերանորոգութեան ենթարկվեց, որի աշխատանքները սկսված էին 1905 թւից։ Հանդէսին ներկայ էին Կովկասի Փոխարքան իր ամուսնու հետ, նրա օգնականները, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան և այլք։ Ճառ արտասանեց էկզարխը։

◆ Կովկասի նախկին կառավարչապետ Շերեմետիևի կինը վախճանվել է։

◆ Կիրակի, Թիֆլիսի ձիարշաւարանում, կէսօրից յետոյ տեղի ունեցան Վասիլևի և Քէբուրօվի թռիչքները։ Ժամը 3 և 20 րոպէին, հանդիսականների առաջ՝ սկզբում դանդաղ, ապա սրարշաւ՝ վեր բարձրացաւ Քէբուրօվը, որը մի պտոյտ անելով իսկոյն էլ իջաւ իպպօդրօմում։ Նրա իջնելուց յետոյ վեր բարձրացաւ Վասիլևը և կէս ժամից աւելի գեղեցիկ ու ճարպիկ պտոյտներով ճախրում էր օդում։ Իպպօդրօմի շուրջը, բաւական բարձր՝ համարեա 400—500 մետր բարձրութեան վրա՝ մի քանի անգամ անցաւ Կուր գետը, անցաւ դէպի Աւճալայի կողմերը, ապա վերադարձաւ իպպօդրօմի վրայով դէպի Նախալովկայի սարերը. վերջին անգամ պտտելով՝ անցաւ դէպի Սաբուրթալօ և այնտեղից էլ Միքայէլեան փողոցի վրայով անցաւ ու իջաւ ձիարշաւարանում։ Ժամը 4 և կէսին երկրորդ փորձը կատարեց Քէբուրօվը և մի քանի պտոյտներ անելով իջաւ։ Շրջակայ սարերից ժողովրդի ահագին խմբեր նայում էին այդ սքանչելի տեսարանին։ Վասիլևի աջող թռիչքը հիացմունքի և անընդհատ ուռաների առիթ եղաւ։ Ժամը 5-ից յետոյ ցրվեց ժողովուրդը։

◆ Թիֆլիսի գեներալ-նահանգապետը, յանցաւոր ճանաչելով «Новая Рѣчь» լրագրի խմբագիր Պարֆէն Ալ. Գոտուային «Շարիխի» յօդուածների տակ ռուսաց զօրքի օֆիցերների հասցէին վիրաւորական մտքեր արտայայտելու համար, դատապարտեց նրան 500 ր. տուգանքի կամ մի ամսով բանտարկութեան։

◆ Երէկվանից մտաւ, երդում տալուց յետոյ, քաղաքային իրաւասուի պաշտօնի մէջ Ա. Ս. Բաբեանը։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ հինգշաբթի օր տեղի կունենայ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովը լսելու Ա. Աթանասեանի զեկուցումը Ընկերութեան ամառային գործունէութեան մասին։

◆ Անցեալ անգամ «Зак.» լրագրից քաղելով հաղորդել էինք, որ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Սիմէօն Շխեանը ձերբակալվել և բանտ է տարվել։ Այժմ, ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացանք, հոկտեմբերի 31-ի երեկոյեան Շխեանը բանտից ազատ է արձակված, առանց գրաւականի։

◆ Հոկտեմբերի 29 ին Ալ. Խատիսեանի նախագահութեամբ կայացաւ Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների և վարչութեան անդամների մասնաւոր խորհրդակցութիւնը, մասնակցութեամբ անօնիմ ընկերութեան ներկայացուցիչ Ֆայնի և էլեքտրաքարշի վերատեսուչ Բէլի, սկզբունքով որոշելու համար, թէ ցանկանո՞ւմ է, արդեօք, քաղաքային դուման բանակցութիւններ վարել անօնիմ ընկերութեան հետ էլեքտրաքարշը Թիֆլիսում քաղաքի կողմից յետ գնելու հարցի առիթով 5 կամ 10 տարի ժամանակով։ Հարցը առաջ բերեց կրակոտ վիճաբանութիւններ, որոնց մասնակցեցին ձայնաւորներ իշխ. Ն. Արղութեան-Երկայնաբազուկ, Պ. Դօլուխանեան, Իս. Դօլուխանեան, Բաղդասարեան, Ջափարիձէ, Ջաբաղարի, Էնֆիաճեան և ուրիշները։ Հռետորների մեծ մասը մատնանշեց, որ չէ կարելի դումային առաջարկել ինչ-որ «սկզբունքային» հարց, թէ ցանկանո՞ւմ է արդեօք դուման բանակցութիւններ վարել յետ գնման մասին, ցոյց չը տալով էլեքտրաքարշի ընկերութեան պայմանները։ Գուցէ քաղաքային գործիչների մէջ կը լինեն կողմնակիցներ էլեքտրաքարշը քաղաքի սեփականութիւն դարձնելուն, բայց և այնպէս եթէ էլեքտրաքարշի ընկերութեան կողմից շահաւէտ պայմաններ առաջարկվեն, կարելի է այն դէպքում սկսել բանակցութիւններ։ Ընդհանրապէս վերջին հոսանքը աւելի ուժեղ է ձայնաւորների մէջ, եթէ ընկերութիւնը որոշակի պայմաններ կառաջարկէ։ Դուման կարող է ընտրել առանձին մասնաժողով կամ գործի ուսումնասիրութիւնը թողնել քաղաքային վարչութեան։ Ֆայնը կարծիք յայտնեց, որ ցանկալի է մասնաժողով ընտրվի՝ էլեքտրաքարշի այժմեան դրութեան հետ մանրամասնաբար ծանօթանալու համար։

◆ Ինչպէս յայտնեցինք, Թիֆլիս եկաւ Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան նախագահ կոմսուհի Պ. Ուվարօվան։ Տիկնոջ գալստեան նպատակն է ուսումնասիրել վրացական մենաստանները։ Կոմսուհին Թիֆլիսում կը մնայ մինչև նոյեմբերի 6-ը։ Նոյեմբերի 4-ին նրա նախագահութեամբ տեղի կունենայ յիշեալ ընկերութեան կովկասեան բաժանմունքի անդամների նիստը, ուր կը կայանան ընկերութեան բաժանմունքի նախագահի, քարտուղարի և գանձապահի ընտրութիւնները։

◆ Վերադարձաւ Հիւսիսային Կովկասից գիւղատնտես Ի. Վասիլեվը։

◆ Պետերբուրգում նիստեր գումարող՝ մարգանէցի խնդրով զբաղվող յանձնաժողովը ցանկալի է գտել պակասեցնել երկաթուղային տարիֆը մարգանէց տեղափոխելու համար։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութեան լիազօր Ֆայնը անակնկալ մեկնեց Ռոստով։

◆ Հոկտեմբերի 28-ին Միխայլովօ կայարանում ժանդարմները խուզարկել են մեքենավարներ Երանօսիձէի, Պիժի, Մխէիձէի, Ջիպաշվիլիի, մեքենավարների օգնականներ Ջավախաձէի, Խարատի, Րիժինաձէի, Վ. Խարատի, փականագործ Կիկինաձէի և Մաչավարիանիի ու Նիօրաձէի տները։ Խուզարկութիւնից յետոյ բոլորին ուղարկել են Գօրու բանտը։ Ազգաբնակութիւնը չը գիտէ ձերբակալութեան պատճառները։ Մի քանիսը կարծում են, թէ ձերբակալութիւնը քաղաքական հողի վրա է, միւսները կապում են Քութայիսի վաճառական Կամարօվի տղային գերելու հետ։

◆ Մեղուաբուծութեան Կովկասեան Ընկերութիւնը դիմել է Կովկասի Փոխարքային խնդրելով ամեն տարի գեմստվային միջոցներից բաց թողնել 500-ական րուբլի մեղուաբուծութիւնը Կովկասում կանոնաւորելու համար։

◆ Նոյեմբերի 1-ի առ. ժ. $8^{1}/_{2}$-ին կախաղան բարձրացրին ոմն Տօխաձէին, մի քանի սպանութիւններ կատարելու համար։

◆ Շաբաթ օրը բացվեց մայրաքաղաքում յայտնի Տրուցցիի ցիրկը, որի նմանը դեռ Թիֆլիսը չէ տեսել։ Տրուցցիի խումբն ունի լաւ մարզված փղեր ու ձիեր։ Աջող են նաև ծաղրածուները և միւս դերակատարները։ Նոր շինութիւնը ունի ամեն յարմարութիւններ ցիրկի համար։ Ներկայացումներին յաճախում է ամեն օր մեծ բազմութիւն։

◆ Լ. Օհանջանեանը իրաւունք է ստացել Բաքւում հրատարակել մի հասարակական-քաղաքական թերթ «Современная Жизнь» անունով։

◆ Լոյս հոկտեմբերի 23-ի գիշերը Կիսլովոդսկի շրջակայքում եկել է առատ ձիւն։ Քաղաքում տեղացել է անձրև։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Տայֆունը» պիէսը հայկական բեմի վրա

I

«Տայֆուն» պիէսը, որ իբրև ներկայ սեզօնում աչքի ընկնող նորութիւններից մէկը աղմուկ հանեց թէ Արևմտեան Եւրոպայի և թէ Ռուսաստանի թատրոնական աշխարհում, երէկ, երկուշաբթի, նոյեմբերի 1-ին, ներկայացվեց հայերէն լեզուով Արտիստական Ընկերութեան թատրոնում։

Դա մի դրամա է չորս գործողութեամբ հեղինակութիւն Լէնգիէլի, թարգմանութիւն Աշխեանի խմբ. Տ. Յովհաննիսեանի։

«Տայֆուն» պիէսի հետաքրքրութիւնը երեք հանգամանքի մէջ է։ Նա բացում է մեր առաջ ճապօնացիների կեանքի մի խորշը— նրանց ուսումնասիրութիւնները Եւրոպայում։ Երկրորդ՝ նա գաղափար է տալիս նրանց հայրենասիրութեան ոյժի մասին։ Երրորդ՝ նա պարունակում է ակնարկներ դեղին և սպիտակ ցեղերի ուրոյն և տարբեր բնաւորութիւնների մասին։

«Տայֆունը» կորովի և երկար կեանք ունեցող պիէսաներից չէ։ Բայց նա սկիզբն է ուսումնասիրութիւնների, որոնք կատարվում են գրականութեան և գեղարուեստի ասպարէզում Հեռաւոր Արևելքի ուժեղ, աչքի ընկնող և միևնոյն ժամանակ ինքնաբնոյթ ճապօնական տարրի վրա։

«Տայֆունի» գլխաւոր հերոսն է Տօկերամօ (Զարիֆեան) անունով մի ճապօնացի երիտասարդ, որը եկել է Եւրոպա զանազան գիտնական և քաղաքական ուսումնասիրութիւններ անելու։ Տօկերամօն լուրջ զբաղված է մի աշխատանքով, որը պէտք է մեծ արժէք ունենայ Ճապօնիայի և ճապօնացիների համար։ Տօկերամօյին յարգում և պաշտում են ճապօնացիները, իբրև մի որոշ առաքելութեան իրագործողի։ Տօկերամօն, ապրելով Փարիզում, ծառայեցնում է իր նպատակների համար ամբողջ ճապօնական գաղութի անդամներին, որոնք ընդունում են նրա հեղինակութիւնը։

Տօկերամօն Պարիզի իր կենցաղավարութեան մէջ ազատ չէ մնացել սիրային արկածից։ Նա սիրում է մի վառվռուն, կենսուրախ, ջղային ֆրանսուհու՝ Ելենա (տիկ. Մայսուրեան) անունով, որի հետ յարաբերութիւններ է պահպանում կէս տարուց աւելի։

Պիէսի զարգացման մէջ հանդէս են գալիս խանդոտութեան, փոխադարձ բթախնդրութեան և վիրաւորանքների արտայայտութիւններ, որոնք վերջանում են սարսափելի ողբերգութեամբ։

Տօկերամօն, չը կարողանալով իրան զսպել, խեղդում է իր սիրուհուն։

Ահա այդտեղ սկսվում է ճապօնական գաղութի մի ինքնատիպ վերաբերմունքը դէպի իրանց մայր երկրի շահերը և նրա գործողները։ Ճապօնացիները, ցանկանալով պահել իրանց հայրենիքի համար Տօկերամօյին, պայմանաւորվում են նրա մեղքը գցել ուրիշի վրա, և ճապօնացի նորեկ մի պատանի վերցնում է իր վրա յանցանքը և ներկայանում դատարանին։

Բայց վերջ ի վերջոյ գաղտնիքը բացվում է և Տօկերամօն ինքը յայտարարում է իրան յանցաւոր։

Ամբողջ մի գործողութիւն նուիրված է դատավարութեան տեսարանին։ Այդտեղ հանդէս են բերված բնորոշ գծեր դատական իրականութիւնից։

«Տայֆուն» պիէսը ունի երկու խմբագրութիւն՝ ֆրանսիական և գերմանական։ Նրանց մէջ տարբեր են գործող անձերից մի քանիսի (յատկապէս եւրոպացիների) անունները։

Հայերէն ներկայ թարգմանութիւնը արված է համաձայն գերմանական խմբագրութեան։

Դերակատարների խաղի մասին կը խօսենք վաղը։ Ա. Ք.

Հոկտեմբերի 31-ին, կիրակի երեկոյեան, Բօրաայի դահլիճում հայ թատրոնական նորակազմ խումբը Ա. Վրոյրի ղեկավարութեամբ ներկայացրեց Մոլիէրի «Ագահ» (L'Avare) կոմէդիան 5 գործ., թարգմ. Վրոյրի։

Չը նայելով նոր, բոլորովին անյայտ ու անփորձ ոյժերի մասնակցութեան, պիէսի խաղը ընդհանուր առմամբ անցաւ սահուն, իսկ տեղ տեղ բաւականին աջող։

Հանդիսականները առատօրէն ծափահարում էին գլխաւորապէս Վրոյրին այն անընդհատ ծիծաղների ու բաւականութեան համար, որ նա պատճառում էր ագահ Հարփագօնի տիպը բնական ու պատկերաւոր ներկայացնելով։

Մնացեալ դերակատարներից՝ իրանց մշտածված խաղով ու ազատ, անբռնազբօսիկ շարժումներով, աչքի էին ընկնում օր. Արշալոյս՝ Հարփագօնի աղջկայ՝ Էլիզայի դերում, և Կոստանեան՝ սիրահար Վալէրի դերում։

Օր. Արշալոյսը, որքան այդ հնարաւոր է նկատել առաջին խաղից, կարող է օգտակար ոյժ լինել ապագայում. ուստի ցանկալի էր նրան տեսնել ժողովրդական թատրոնի բեմի վրա անաչառ ու գեղարուեստական ձգտումներով ղեկավարվող անձանց ղեկավարութեան ներքոյ։

Լաւ էր տ. Զարուհի-Վրոյր միջնորդ կնոջ դերում։

Վերջին գործողութիւնը անցաւ սառն։

Ներկայացումը վերջացաւ ժամը 11 և 40 րոպէին։ Գոհ սրտով ցրվեցին սակաւաթիւ հանդիսականները։

Նիւթական տեսակէտից՝ չափազանց անաջող էր։

Մուտքը աւելի չէ 20 րուբլուց։

Ներկայացման տպաւորութիւնը ժողովրդական բնոյթ ունէր իր յաճախորդներով։ Եւ, ըստ երևոյթին, Վրոյրի ներկայացումները վերջ ի վերջոյ դառնալու են զուտ ժողովրդական. գուցէ դա շատ լաւ կը լինէր։ Լ. Դ.

Օպերային ներկայացում

Թիֆլիսի Արքունական թատրոնը իր շաբաթ օրվայ gala ներկայացմանը, հոկտ. 30-ին, վերանորոգեց Պուչչինիի «Մադամ Բատտերֆլայ» օպերան։

Պուչչինիի հզօր երաժշտական ըմբռնողութիւնը և ազդեցիկ նուագածութիւնը արտադրել են այդ օպերայում գեղարուեստական զգացնող կտորներ, որոնք խոր թափանցում են ունկնդիրների սրտերի մէջ։

Օպերայի գլխաւոր հերոսուհու՝ տիկին Բատտերֆլայի դերը կատարում էր երգչուհի Վիկշեմսկայա, որ ունի հաճելի, մաքուր ձայն, խելացի և զգացված խաղ։ Երգչուհին ներշնչվում է իր դերով և համակվում իր ներկայացրած տիպի էութեամբ։ Նրա խաղը թողեց ուժեղ տպաւորութիւն հանդիսականների վրա և շատերի աչքերին ցոլացրեց արտասուքի կաթիլներ։

Օպերայի մէջ, ճիշդ է, չափազանց շատ են մելամաղձոտ ոճը և ողբերգական գունաւորութիւնը, բայց ինքը երաժշտական գործը այնքան կատարեալ, նուրբ և ազդու է, որ մարդ ուրախութեամբ անց է կացնում ժամեր երաժշտական գեղեցիկ ձայների և ելևէջների կոհակներում։ Սիրող

Ռուսաց գրականութեան մէջ յայտնի „Обрывъ" վէպը, փոխադրվելով պիէսի, դրված է բեմի վրա։

Նիկուլինի խումբը խաղաց այդ պիէսը կիրակի, հոկտեմբերի 31-ին, էժանացրած գներով, որպէսզի ներկայացումը մատչելի լինի դպրոցական պատանեկութեան համար։

Թէև փոխադրութիւնները չեն կարողանում փոխարինել իսկական բնագիրը, այնու ամենայնիւ Գօնչարօվի վէպի էութիւնը և տիպերը բաւականաչափ արտայայտված են ներկայ բեմական գրուածքի մէջ և յամենայն դէպս նրանք պատճառում են հաճելի վերյուշումներ նախկին կարդացածի։

Երկու հերոսուհիների՝ Վերա և Մարֆինկա քոյրերի՝ դերերը կատարում էին աջողութեամբ Զարօվա և Լարինսկայա։ Առաջինը ընդգծեց Վերայի ինքնուրոյն, ինքնասէր, հպարտ և անմատչելի, բայց ուժգին զգացող և խոր ներշնչվող բնաւորութիւնը։ Երկրորդը տուեց պարզամիտ, անկեղծ, մաքուր բնութեան զուարթ տիպը։

Մուրօմցևը, որ կատարում էր գլխաւոր հերոս Րայսկիի դերը, տուեց մի քանի ուժեղ արտայայտութիւններ, բայց տիպը իր ամբողջութեամբ չը ներկայացաւ բեմի վրա։ Վատ չէին Նելիդով, Պօկրօվսկի, Դօլսկայա։ Սիրող

Բօրժոմ, 25 հոկտեմբերի

Հոկտ. 24-ին դերասան Շահէնը, մասնակցութեամբ տ. տ. Էլզա-Հրանոյշի, Աստղիկի և տեղիս սիրողների, հայոց դպրոցի դահլիճում ներկայացրեց 3 գործ. «Խանում» կոմէդիան։ Ներկայացումը անցաւ բաւարար։

Ժողովուրդը ցրվեց գոհ սրտով։ Մուտքը բաւարար էր։ Գեղամ

Ռաշտ (Պարսկ.), 22 հոկտեմբերի

Վերջերս մեզ մօտ կազմվեց թատերասիրաց ընկերութիւն, որի նպատակն է ամսական 3—4 ներկայացում տալ, իսկ օգուտը յատկացնել հասարակական հիմնարկութիւնների։

Նպատակն անշուշտ գովելի է։

Մօտ 3 ամիս է, որ յիշեալ նորակազմ ընկերութիւնը կազմակերպվում և պատրաստվում էր, և ահա ամսիս 17-ին նա տուեց իր առաջին ներկայացումը։ Խաղացին Յ. Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ» կոմեդիան 3 գործ. յօգուտ նոյն ընկերութեան։ Պիէսը կրճատված էր։ Խաղը ընդհանրապէս բաւարար անցաւ, եթէ հաշւի չառնենք այն հանգամանքը, որ դերակատարներից մի քանիսն իրանց դերերում չէին։

Անտրակտներին մի երկու անգամ շատ անկանոն կերպով բեմի ետևից լսելի եղան թառի և քեամանչի ձայներ, և ածում էին զուռալ, ըստ եղանակի էլ՝ ծափահարութիւն։ Այս վերջին հանգամանքը առիթ ծառայեց սրահում եղող երիտասարդներից մի քանիսին՝ ծափահարութեամբ ընկերակցել դերակատար-ծափահարողներին և անկանոն ձայներ արձակել, որը շատ վատ տպաւորութիւն գործեց սրահում եղող հասարակութեան վրա։

Ցանկալի էր, որ հերթապահները հսկէին սրահի կարգապահութեանը, որպէսզի սրանից յետոյ այդպիսի անկարգութիւններ տեղի չունենան։

Այս ներկայացմանն աչքի էր ընկնում հասարակութեան բացակայութիւնը։ Այս հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ վարչութիւնը կանոնաւոր աֆիշաներ չէր ցրել ժամանակին, իսկ տոմսակները ծախում էին դռնէ դուռ ընկած։ Տեղերի գները շատ թանգ էին նշանակված։ Եթէ այսպէս շարունակվի ապագայում, ոչ ոք չի յաճախի թատրոն։ Սամ-Կան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 30 հոկտեմբերի

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը արդէն դիմել է Թիֆլիսի քաղաքացիներին՝ խնդրանօք օգնել իրան քաղաքային թանգարանը լրացնելու։ Այդ կոչին արձագանք տուին մի շարք անձինք, որոնց՝ քաղաքային վարչութիւնը մի անգամ ևս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։ Իմանալով, որ քաղաքի շատ տների և հաստատութիւնների մէջ կան առարկաներ, խիստ կարևոր՝ թանգարանի համար, քաղաքային վարչութիւնը մի անգամ ևս խոնարհաբար խնդրում է բոլոր անձանց, որոնք ունեն հին պլաններ, նկարներ, տեսքեր, քանդակներ, դօկումենտներ, ֆօտօգրաֆիաներ և այլ առանձին առարկաներ, վերաբերեալ Թիֆլիս քաղաքի պատմութեան, նուիրել այդպիսիները յիշեալ թանգարանին, որի շինութեան մէջ նրանք կը պահվեն խնամքով, կամ թոյլատրել վերցնել նրանց պատճէնները, եթէ դա հնարաւոր է։

Քաղաքային թանգարանի ծրագրի հետ անձնապէս ծանօթանալ կամեցող կամ որևէ տեղեկութիւններ ստանալ ցանկացող անձանց խնդրում ենք դիմել քաղաքային վարչութեան, քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Ի. Խատիսեանին։

Քաղաքագլխի պաշտօնակատար՝
Ալ. Խատիսեան

Թիֆլիս, 27 հոկտեմբերի

Անցեալ տարվայ «Մշակի» № 291-ում Խոնձակի գաւառի աւերակված Ղարադաղլու գիւղի լիազօրները մի դիմում-նամակով նկարագրելով մեր գիւղի աննախանձելի դրութիւնը (որ առաջացել է հայ-թուրքական ընդհարումներից), նկարագրելով որ մեր գիւղը զրկված լինելով իր բոլոր շարժական և անշարժ կայքերից, ստացուածքներից՝ իսպառ զրկվել էր նոյնպէս և իր հոգեպէս մխիթարող եկեղեցուց և դպրոցից, դիմել էինք հայ բարերարներին, բարեգործական և կուլտուրական ընկերութիւններին՝ օգնելու եկեղեցին և դպրոցը վերաշինելու, որոնց ծախսը մօտ 5,000 րուբլի կարող է լինել, մի գումար, որ անտեսապէս քայքայված մի գիւղի ոյժերից միանգամայն վեր է…

Սակայն մօտ մի տարի է, որ մեր դիմումը մնաց ձայն բարբառոյ… և մեր խնդիրը ոչ մի սրտում արձագանք չը գտաւ… չը նայած որ այդ ժամանակամիջոցում եղան մի շարք բարերարներ տասնեակ հազարների կտակներ, որոնցից ոմանք բարերարութիւնը արել էին այնպիսի տեղեր, որոնք աւելի ապահով և աւելի պակաս կարիք ունէին, քան մի՝ փլատակների վրա նստած գիւղացիութիւն, մի խոպան գիւղի բնակիչներ…։

Գիւղացիք, ի նկատի առնելով որ մինչև այժմ դրսից ոչ մի օգնութիւն չը ստացվեց և գուցէ էլի երկար պիտի սպասեն, զրկված՝ եկեղեցու և դպրոցի տուած հոգևոր մխիթարութիւնից, այս ամսի սկզբում համայնական ժողով գումարեցին, ուր ընտրելով 6 հոգի վաքիլներ (լիազօրներ) (Մամիկոն Քաթանեան, Մկրտ. Հայրապետեան, Մարտ. Գալստեան, Յար. և Միքայէլ Յովհաննիսեանցներ և տողերիս գրողը), որոնց պարտաւորեցրին ժողովարարութեամբ կամ այլ և այլ տանելի միջոցներով նպաստներ հաւաքել, որ գէթ եկեղեցին մի կերպ կարկատեն, որպէսզի իրանց յուսահատ հիւանդը անհաղորդ չը մնայ, մեռելը անպատարագ չը թաղեն և այլն, որպիսի հանգամանքները աւելի ծանր են գիւղացու համար, քան մահվան պատիժը։

Խորհրդակցութիւնից երևաց, որ լոկ եկեղեցին կարկատելու համար էլ առնուազն պէտք է 5—6 հարիւր րուբլի։ Գիւղը, որ ունի մօտ 80 տուն բնակիչ, գուցէ հնար ունենար առանց ծանրանալու ուրիշի վրա այդ գումարն իսկոյն իր մէջ ժողովելու, եթէ այս տարի նրա իւրաքանչիւր տնից չը պահանջէին արքունական հարկ մօտ 50-ական րուբլի, մի ահռելի գումար նրանց ոյժի համեմատ։ Այնուամենայնիւ որոշվեց 100 րուբլի գիւղից ժողովել, իսկ մի հարիւր րուբլի էլ նուիրեց լիազօրներից մէկը— Միքայէլ Յովհաննիսեանը—ասելով «լաւ է ես շատ բանից զրկված լինեմ, քան թէ եկեղեցուց»։ Սակայն քանի որ դրանով ևս գործը գլուխ գալ չէ կարող, լիազօրները նախ քան դռնէ դուռն ընկնելով ժողովարարութեան դիմելը, պարտաւորեցրին ինձ՝ սոյն տողերով մի անգամ էլ բարերարների, բարեգործական ընկերութիւնների ուշադրութիւնը հրաւիրել և ծայրագոյն իշխանութեան միջնորդութիւնը հայցել։

Ի դիմաց Ղարադաղլու գիւղի լիազօրների՝
Կար. Ղազարեան

Թիֆլիս, 29 հոկտեմբերի

«Մշակ» լրագրի № 237-ի մէջ, Թիֆլիսի արհեստաւորների վարչութեան լիազօրների ժողովի մասին հաղորդված յօդուածի մէջ, որտեղ լիազօրներից մի ոմն Տէր-Պետրոսեան դատափետել է որբերի դատարանի անդամ Մայսուրաձէի գործունէութիւնը և ակնարկել է հանգուցեալ Իվան Տէր-Սարգսեանի՝ Մոսկովսկայա փողոցի վրա խնամակալութեան ներքոյ գտնված տան վաճառման մասին, ես, որբերի դատարանի նախագահի յանձնարարութեամբ, խոնարհաբար խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ, ճշմարտութիւնը վերականգնելու և թիւրիմացութեան առիթ չը տալու համար, սոյն երկտողս զետեղել թերթիդ մօտիկ համարներից մէկում։

Եղելութիւնը այս է։

Որբեր դատարանում հանգուցեալ Իվան Տէր-Սարգսեանի գոյքի վրա խնամակալութիւն նշանակվել է 1909 թ. հոկտեմբերի վերջը, իսկ նրա տունը Մոսկովսկայա փողոցի վրա աճուրդով ծախվել է Քութայիսի հողային բանկում նոյն թւի դեկտեմբերի 21-ին, այսինքն երկու ամսից յետոյ. այստեղից պարզվում է, որ այդ անշարժ կայքի վրա բարդված հարկերը չեն եղել վճարված դեռ Իվան Տէր-Սարգսեանի կենդանութեան ժամանակից, չը հաշւելով և այն որ այդ տունը եղել է գրաւ դրված մասնաւոր կերպով մի ուրիշի մօտ ևս և որ այս պարտատէրը, փոխանակ 10 հազար րուբլու, ստացել է աւելին ևս, այսինքն 10,351 ր.։ Սրանից ուրեմն պարզ երևում է, որ ոչ որբերի դատարանի և ոչ էլ նրա անդամ Մայսուրաձէի կողմից չէ եղել որևէ անփութութիւն, քանի որ սրանք իրաւասութեան սահմաններից դուրս լինելով այս՝ անկարող էին ազատել վերոյիշեալ տունը աճուրդով ծախվելուց։ Գալով այն կէտին, որ Տէր-Պետրոսեանը մեղադրում է Մայսուրաձէին, թէ վերջինս իր արձանագրութեան մէջ չէ մտցրել հանգուցեալ Տէր-Սարգսեանի գոյքը, պէտք է նկատել, որ առհասարակ որբերի դատարանում խնամակալութիւն նշանակելիս վեր է գրվում այն կայքը, ինչ որ գոյութիւն ունի հէնց այդ ժամանակ և այդ էլ այն դէպքում, երբ կողմնակիցներն են յայտնում՝ մտցնելու ցուցակի մէջ։

Ինչ վերաբերում է այն նկատողութեանը, թէ որբերի դատարանի գործունէութեան մասին անցեալ տարի հարց է բարձրացել քաղաքային դումայում, այդ մասին արդէն իր ժամանակ գրվել է մամուլում և հիմնաւորապէս գրվել է բոլորը։

Պէտք է աւելացնել, որ վերոյիշեալ Տէր-Պետրոսեանը դեռ առաջ էլ պատգամաւորների ժողովում սուտ մեղադրանքներ բարդեց խնամակալների վրա (опекуны), մեղադրելով նրանց զանազան զեղծումների մէջ՝ վարկաբեկ անելու նպատակով, և մինչև իսկ նախագահը ստիպված եղաւ այդ առիթով գրագրութիւն սկսել արհեստաւորների աւագի հետ, իմանալու համար թէ ինչ խնամակալներ իրանց թոյլ են տուել զեղծում կատարել՝ համաձայն Տէր-Պետրոսեանի յայտարարութեան. սակայն վերջինս միշտ խոյս է տուել ապացուցանելուց, չունենալով ձեռքի տակ ոչ մի փաստ և շօշափելի ապացոյց՝ բացի լոկ և դատարկ բարբաջանքներից։

Որբերի դատարանի նախագահը չափազանց զարմացած է, թէ՝ ինչպէս անտեղեակ և դատարանական տարրական օրէնքներին անծանօթ մարդիկ թոյլ են տալիս իրանց՝ հասարակական բազմամարդ ժողովներում ճառել և քննադատել լոկ իրանց սեփական շահից դրդված այն օրէնքներն ու կարգերը, որոնց մասին բնաւ ոչ մի հասկացողութիւն չունեն։

Որբերի դատարանի իսպօլնիտելնի չլենօմիկ՝
Բողդան Բեբինեանց

ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԻԹՈՎ

—

Շուշու եռանձնեայ հոգաբարձութեան ու նրա հ. նախագահի պատասխանը վերջապէս բաղդ ունեցանք կարդալու «Մշակի» № 215-ում։

Եղիշէ վարդապետը, որ 3 ամիս առաջ հեռագրով խոստացաւ մի առ մի հերքել տեսուչ Տէր-Պօղոսեանի պատասխանը, իր խոստումը մինչև այսօր չը կատարեց և հիմա հրապարակ է եկնում մի նամակով իբրև թէ հերքելու այն բոլոր մեղադրանքները, որ նրանց վրա բարդեցին և տեսուչը, և հոգաբարձութեան անդամը։ Սակայն դա հերքում չէ, այլ մի գրութիւն, որտեղ տրամաբանութեան սով է տիրում։ Նրանք գրում են ի պատասխան տեսչի մեղադրանքների, թէ նա իրանց դէմ ոչինչ փաստօրէն չէ գրել՝ այլ միայն հայհոյել է. բայց պէտք է իրաւամբ խոստովանել, որ այդ հոգաբարձութիւնը աւելին էր արժանի, հէնց այն փաստը, որ նա հրապարակով սպառնում է հերքել Տէր-Պօղոսեանին ու ապա ծիծաղում և այն լրագրի վրա, որին հեռագրում է, և նրա ընթերցողների վրա՝ չը կատարելով իր սպառնանքը, լաւ պերճախօս ապացոյց է, թէ նրանք ինչպէս են յարգում հասարակական կարծիքը։ Հոգաբարձութեան նամակը չը հերքելով ոչինչ՝ միաժամանակ հաստատում է, որ նրանք այն 10 կէտերը, որոնք հիմնովին հերքվեցին տեսչի կողմից, պաշտպանելու իսկ հնարաւորութիւն չունեն։

Հոգաբարձուներից Մանկասարեանց հրապարակով յայտնում է, որ նա դէմ է եղել նրանց ապօրինի վճռին և հոգաբարձութեան հասցէին մեղադրանքներ էր նետել. նրանք փոխանակ հերքելու՝ պատասխանում են՝ «բոլորովին հիմքից զուրկ են և մեր նախկին պաշտօնակիցներից մէկի գրածները». սա ոչ պատասխան է և ոչ վիճաբանելու ձև։ Իմպերատիվներով խօսելու ձևը վաղուց արխիւ է ձգված. դուք բացատրեցէք, թէ ինչումն է կայանում նրա սխալը։

Այնուհետև ձեզ գրում են, որ դուք իրաւունք չունէիք 3 հոգով դպրոցի բաղդն որոշել և այնպիսի լուրջ, պատասխանատու վճիռ կայացնել՝ ինչպիսին է ուսուցչական կազմի արձակումը. որ նոյնանման վճիռների թէև դուք ձևականօրէն իրաւունք ունէք, սակայն նորմալ պայմաններում օգտվել այդ իրաւունքից առնուազն քեալլագեօզութիւն է։ Դուք պատասխանում էք՝ «հոգաբարձութիւնն իր կարգադրութիւններն արել է միաձայն» և այս տողերի տակ փոխանակ 6 հոգաբարձուի, ստորագրել էք 3 հոգի. սա ինքնըստինքեան լաւ ապացոյց է, որ դուք կամ միաձայն բառի նշանակութիւնը չը գիտէք, որ չափազանց ցաւալի է, և կամ դիտմամբ ցանկանում էք անճշտութեան սահմաններն ոտք կոխել։ Մանաւանդ որ հոգաբարձութեանդ մի անդամն ևս հրապարակով յայտնեց, թէ ինքը հակառակ է եղել ձեր վճռին, իսկ միւս երկուսը քաղաքից բացակայ են եղել։

Սակայն մի րոպէ ենթադրենք, որ յիրաւի հոգաբարձութեանդ 2 անդամն էլ ձեզ հետ համամիտ են եղել, այնուամենայնիւ դուք իրաւունք չունէիք նման վճիռ կայացնել ու ողորմուկ պատճառաբանութիւններով ուսուցիչներ արձակել։ Տարաբաղդաբար հայ ուսուցիչն այն աստիճան իրաւազուրկ է, որ հայկական իրականութեան մէջ հնարաւոր է լինում ամէն մի ապօրինի վճիռ նրա վզին փաթաթել ու անպատիժ փողոց նետել։ Մեր համոզմունքն է, որ դուք այդպիսի պատճառաբանութիւններով հազիւ թէ կարողանայիք արձակել ձեր դռնապանին կամ լակէյին։

Այո, կան հարցեր, որոնց լուծումը բացարձակ միաձայն պիտի լինի, մինչև իսկ առանց մի ձայնի տատանումների. օրինակ՝ այն հարցը, թէ քուէարկութիւնը գաղտնի կամ բացարձակ պիտի լինի. եթէ մինչև իսկ ժողովականներից մէկը դէմ եղաւ դրանցից մէկին, նա չէ կարող գործադրութիւն ստանալ։ Պետութեան հիմնական օրէնքներից գէթ մէկի փոփոխութեան ժամանակ պարլամենտն իսկ իր պարտքն է համարում ազգաբնակութեան բոլոր անդամների կարծիքն իմանալ և ապա որոշ վճիռ կայացնել, մինչև իսկ այնպիսի դէպքերում, երբ ժողովրդի մէջ տարածված մի սովորութիւն պիտի օրէնքով արգելվի։

Իսկ դուք առանց լուրջ, հիմնական պատճառաբանութիւնների արձակում էք մի ուսուցչական խումբ, ուրիշ խօսքով՝ դպրոցի կէս բովանդակութիւնը երեք հոգով, և այդ այն ժամանակ՝ երբ մի քանի օրից յետոյ հեռանալու էք դպրոցից։ Գոնէ դուք այդ հարցի լուծումը թողնէիք պատգամաւորական ժողովին։

Վերջապէս ձեզ մեղադրում են, որ ձեր պաշտօնակիցներից մէկը մինչև այսօր հաշիւները չէ մաքրել. դուք փոխանակ հերքելու՝ յայտարարում էք. «Հոգաբարձութիւնն երբեք խոյս չէ տուել հաշւետուութիւնից և այժմ էլ պատրաստ է հաշիւ տալ թէ պատգամաւորական ժողովին և թէ ամէն մի քաղաքացու»։

Սա արդէն շատ ուշացած յայտարարութիւն է. պատգամաւորական ժողովը իր ուժգին հարուածը հասցրեց ձեզ։ Նա բոլորիդ էլ սևացրեց։

Ձեզ վրա լուրջ մեղադրանքներ բարդվեցին. փախչել այդ ամենից և փքրոգութիւն է, և լռելեայն համաձայնութիւն։ Քաղաքակիրթ աշխարհում այդպիսի դէպքերում դիմում են պատւի դատարանի։

Մոսկվա, 11 հոկտեմբերի Առ-Ձէն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սաքզուար, 13 հոկտեմբերի

Ամսիս 7-ին Ռօզենբլումի ֆիրմայի տեղիս կառավարչի եղբայրը, Դաւիթ, ազգով հրեայ, բազարով անցնելիս ջուր են ածում վրան պարսիկ խանութպանները։ Դաւիթը բողոքում է այդ արարքի դէմ, բայց դեռ խօսքը չը վերջացրած՝ նորից ածում են և սկսում հայհոյել։ Անպատւված հրէան այդ առիթով դիմել է տեղիս ռուսական հիւպատոսական գործակալին, որը միաժամանակ և «Փոխատու զեղջող բանկի» տեղիս ճիւղի կառավարիչն է։ Վերջինս հրամայել է տեղիս ոստիկանութեանը, որպէս զի յանցաւորները պատժվեն, բայց նրա պահանջը դեռ մինչև այժմ մնացել է անուշադիր։

Ամսիս 10-ին, երեկոյեան, արևը մայր մտնելուց յետոյ՝ արևմտեան կողմից սկսեց փչել մի սարսափելի ու չը տեսնված քամի։ Տեղական ժողովուրդը չէ մտաբերում անցեալում մի այդպիսի փոթորիկ։ Մրրիկը տևեց մօտ մի ժամ։ Առ այժմ մեզ յայտնի չէ, թէ որտեղից սկսվեց և որտեղ վերջացաւ։

Մի քանի օր առաջ տեղս եկաւ և գնաց Թէհրան Մէշէդի ոստիկանապետը իր հետ տանելով տեղիս ոստիկանապետին։ Մի քանիսն ասում են, թէ պաշտօնից հեռացրել են նրանց, իսկ ուրիշներն էլ պնդում են, թէ ժամանակաւորապէս գնացին։

Թէհրանից լաւ լուր չէ գալիս տեղս։ Ահագին քանակութեամբ ցորեն ու ալիւր են ամբարում Թէհրանում։

Այսօր բազարում մի պարսիկ՝ լիքը հրացանը ձեռին դուրս է գալիս մահ գալու։ Մի քանի հոգի ասում են, որ նա արբած է։ Այդ միջոցին պարսիկը հրացանը ուղղում է ու խփում մի խանութատիրոջ և սպանում նրան։ Մարդասպանը ապա գընում բարձրանում է իրանց տան կտուրը։ Ոչ ոք չը համարձակվեց մօտենալ նրան, և նա մնացել է այդպէս։ Յով.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կառավարութեան թոյլտուութեամբ Ռուսաստանի հարաւի լեռնարդիւնաբերողների համագումարը տեղի կունենայ նոյեմբերի 23-ին Խարկովում Վագների նախագահութեամբ։

Խօլերայով հիւանդացողներ և մեռնողներ չը կան. մնում են պառկած 58 հիւանդ։

ՕԴԵՍՍԱ։ Մի շաբաթում ժանտախտով հիւանդացաւ 1, առողջացան 3, մնում են հիւանդ 9 հոգի։

Խօլերայով հիւանդացողներ չը կան։

ՍՄՕԼԵՆՍԿ։ Նահանգապետը դադարեցրեց Սմօլէնսկի և Վեազեմի քաղ. դումաների որոշումները՝ Մուրօմցևի յիշատակը տօնելու մասին, պատասխանատւութեան ենթարկելով քաղաքագլուխներին։

ՄՈՍԿՎԱ։ Ուսպէնսկի տաճարը կողոպտելու գործի համար Սեմինը դատապարտվեց 6 տարով տաժանակիր աշխատանքների։

31 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երևան հանվեց գազանային սպանութիւն Իզմայլովի գնդի երրորդ վաշտի № 14 տնակում. գտնվեցին սպանված՝ արհեստանոցի տէր Զալմանը, նրա կինը և արհեստանոցի աշակերտներից 3-ը։

Սկսվեց ճան. հաղ. ինժեներների ինստիտուտի յօբելեանի տօնումը։

Արծաթէ պսակ դրվեց Ալեքսանդր I Կայսրի դամբարանի վրա։

ԽԱՐԿՕՎ։ Բացվեց բժշկական ընկերութեան կանանց բժշկական ինստիտուտը։

ԼԻԼ։ Անզէն հանքում պայթումից 4 բանւոր սպանվեցին։

ՊԱՐԻԶ։ Լէզանէն մարդկանցով բարձրաւ Իսսի-լէ-Մուլինօյում ժամը 6 և 43 րոպէին և իջաւ ժամը 9 և 10 րոպէին Բրիւսէլում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 9 ժ. 28 ր. առաւ., Գանձակ է հասնում 2 ժ. 38 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 18 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 12 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 59 ր. գիշ., Բագու՝ 11 ժ. 26 ր. գիշ.։ Մարդատար № 6 գնացքը՝ 3 ժ. 35 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 56 ր. երեկ., Եւլախ՝ 12 ժ. 7 ր գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 49 ր. գիշ, Բալաջարի 8 ժ. 13 ր. առաւօտ., Բագու՝ 9 ժ. 7 ր. առաւ.։ Պոստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 25 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 47 ր. գիշ., Եւլախ՝ 7 ժ. 3 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 11 ր. ցեր., Բալաջարի՝ 3 ժ. 53 ր. ցեր., Բագու՝ 5 ժ. 21 ր. երեկ.։ Խառն գնացքը՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 4 ժ. 18 ր. գիշ., Գանձակ է հասնում 12 ժ. 48 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. ցեր. Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 39 ր. գիշ., Բալաջարի՝ 4 ժ. 31 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 22 ր. առաւօտեան։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պոստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 41 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 41 ր. առ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 18 ր. ցեր., Երևան (առանձին գնացք Ուլուխանլուից յարմարեցված այս գնացքին)՝ 7 ժ. 11 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 21 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 5 ր. գիշ.։ Մարդատար-ապրանքատար № $^{78}/_{79}$ գնացքը՝ 4 ժ. 33 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 31 ր. գիշ., Էջմիածին կայար. 9 ժ. 3 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 34 ր. առ., և սրանից դէնը այլևս չէ գնում։ Խառն գնացք IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան № $^{108}/_{109}$՝ 5 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 7 ժ. 20 ր. երեկ., Էջմիածին կայարան՝ 1 ժ. 30 ր. գիշ., առանց Երևան մտնելու, Նախիջևան՝ 9 ժ. 49 ր. առաւ., Ջուլֆա՝ 11 ժ. 58 ր. ցերեկ.։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5 գնացքը՝ 8 ժ. 10 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 18 ր. ցեր., Բաթում՝ 9 ժ. 20 ր. երեկ.։ Պոստատար № 3 գնացքը՝ 2 ժ. 9 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 18 ր. երեկ., Բաթում՝ 4 ժ. 28 ր. գիշ.։ Մարդատար № 7 գնացքը՝ 11 ժ. 53 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 53 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 26 ր. ցեր.։ Խառն գնացք № 107 ըստ հարկի կարևորութեան՝ 1 ժ. 5 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 54 ր. առաւ., Բաթում՝ 8 ժ. 33 ր. երեկ.։

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № $^{9}/_{66}$ գնացքը՝ 3 ժ. 28 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 8 ր. երեկ., Միխայլօվօ՝ 7 ժ. 43 ր. երեկ., Բօրժոմ՝ 9 ժ. 8 ր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւօտեան։ Պոստատար № 3՝ 1 ժ. 9 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 55 ր. գիշ., որ այլևս դէնը չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 12 ժ. 3 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6 գնացքը՝ 2 ժ. 46 ր. ցերեկ.։ Պոստատար № 4 գնացքը՝ 9 ժ. 25 ր. գիշ.։ Մարդատար № 8 գնացքը՝ 8 ժ. 45 ր. առաւ., որ դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 3 ժ. 16 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պոստատար № $^{72}/_{73}$ գնացքը՝ 6 ժ. 36 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ № $^{80}/_{81}$ գնացքը՝ 7 ժ. 1 ր. առաւ.։ Խառն գնացքը IV կարգի վագոններով՝ 10 ժ. երեկ.։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ մարդատար № $^{61}/_{10}$ գնացքը՝ 7 ժ. 35 ր. առաւօտ.։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Արագ գնացքները (№ 2՝ Թիֆլիս-Բագու և № 1՝ Բագու-Թիֆլիս) առանց փոփոխելու գնում են մինչև Ռոստով և յետ դառնում, անպատճառ մտնելով Բագու՝ ամբողջ կազմով և բոլոր տեղերը պլաց-կարտով են։ Այս գնացքներում կայ Միջազգային Ընկերութեան մի միքստ I/II կարգի վագոն, որ առանց իջեցնելու հաղորդակցում է Թիֆլիս-Բագու-Մոսկվա՝ աւելացված վճարով (1000 վերստը I կարգի վագոնում 8 ր., II կարգի՝ 6 ր.)։

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների)
5—7 ժ. երեկ. (բոլորին)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(ե.հ.կ.) 909. 100—38

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ
ԲԱՄԲԱԿԸ
ԵՒ
ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ
Գործնական եւ լրիւ ձեռնարկ բամբակագործութեամբ պարապողների համար։
20 նկարներով
Գինն է 40 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ", կամ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և Բագու „Сотрудникъ"-ին։
(ե. կ.) 1233. 10—2

ԿԱՆԱՑԻ ԳԼԽԱՐԿՆԵՐ
Աերօպլան
Ստացված են նոր բացված խանութում
O BON GOUT
Սօլօլակսկայա փող., № 10, Օտտէնի դեղատան մօտ։
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԳԼԽԱՐԿՆԵՐ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։
Պահանջվում են վարպետուհիներ

ԱԳԵՆՏ
Յ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆ
ՌԵԿԼԱՄՆԵՐ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունում եմ տեղական և օտար քաղաքների լրագիրների և ամսագիրների համար՝ ամենաձեռնտու պայմաններով, ՎՃԱՐԸ ՄԱՍ-ՄԱՍ։ Ընդունում եմ նոյնպէս կոմիսիօնական ամեն տեսակ պատուէրներ։
Ունեմ երկար տարիների փորձառութիւն։
Խնդրում եմ չը շփոթել ինձ միւս ագենտների հետ։
Հասցէն՝ Красногорская, 30. ТЕЛЕФОНЪ № 1041.
Պատուէրները կատարում եմ ճշգրիտ կերպով։
Անձամբ կազմում եմ ամեն տեսակ ռեկլամներ։

Քաղաքից մեկնելու պատճառով
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ՏՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ
այն է՝ մահճակալներ ընկուզեայ փայտից (գեղեցիկ շինուածք. 2 հատի իսկական արժէքն է 45 ր., ծախվում է 15 րուբլով), այլ և այլ սեղաններ, սեղանատան կախելու լամպ և ուրիշ մանր մունր առարկաներ։ Հասցէն՝ Վօզնեսենսկայա փ., № 4, III յարկ՝ բակից, բնակարան Սափաբեանի։ Գալ միայն առաւ. ժամը 10—12-ը։
1210. 2—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՀԱՅՈՒՀԻ ԲՕՆՆԱ
ռուսախօս մի հայ ընտանիքի $4^1/_2$—7 տարեկան երեխաների համար Մայկօպում։
Պայմանների մասին դիմել՝ Майкопъ, Старшему учителю Армянской церковно-приходской школы Геворку Абазянцу.
(կ. ե) 1229. 2—2

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
XXIX ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ XXII ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ
Տարեկան բաժանորդները ստանում են.
I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելուածով։
II. ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «Թատրոն և Երաժշտ.» յաւելուածով։
III. ԱՌՈՂՋԱՊԱՀ պատկերազարդ ամսաթերթը «Հոգու և Մտքի առողջութիւնը» յաւելուածով։
IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ III և IV պրակներ։
V. ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՅՑ 1912 Թ.։
VI. ԱՐՕՁԱ, Fantasie իրականութիւնից։
VII. ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, շքեղ նկար ապակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցված թէ սեղանի վրա դնելու և թէ պատից կախելու։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ԱՂԲԻՒՐ տարեկան 3 ր., (Արտասահման 5 ր.) Դպրոց. աշակ. հասցէով 1 ր.
ԱՌՈՂՋԱՊԱՀ » 2 ր. (Արտասահման 3 ր.) » » » 1—50 կ.
ԱՂԲԻՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀ 5 ր. (Արտասահման 7 ր.) » » » 2 ր. —
ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ՏԱՐԱԶ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ, ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՅՑ, ԱՐՕՁԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Բոլոր յաւելուածներով և պրէմիաներով } 10 Ր. ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 18 Ր. կամ 50 ՖՐ. 5 Դպրոցակ. աշակերտ. համար ՀԻՆԳ Ր.
Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Այն դպրոցները, որ 50 բաժանորդ կը տան «Աղբիւրին», նրանց կուղարկվի 5 օրինակ «Աղբիւր» չքաւոր աշակերտների համար։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ" կամ „Таразъ".
Tiflis (Caucase) Direction „Agbür" կամ "Taraz".
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
(ե. ու.) 1234. 0—1

ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
◆
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ զօրանչելի ուժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրօններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրօֆէսիօնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօսացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամականիշ ճանապարհածախսի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A. (ե.շ.) 689. 100—43

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ Թիֆլիսի Արքունական Պալատում նոյեմբերի 30-ին 1910 թ. ցերեկվայ ժամը 12-ին տեղի կունենան՝ թէ բանաւոր և թէ փակ ծրարներով՝ ԱՃՈՒՐԴՆԵՐ ամբողջովին և մաս-մաս, երեք օրից յետոյ կրկնաճուրդի նշանակումով, կապալով տալու համար երեք տարվայ ժամանակով, պայմանագրի հաստատութեան օրից սկսած, Թիֆլիսի նահանգի ստորև յիշված էտապային կայանների համար սայլեր մատակարարելու և պահպանելու գործը։ Նրանք, որոնք կամենում են մասնակցել բանաւոր աճուրդին, պարտաւոր են՝ աճուրդը նշանակված օրվայ առաւօտեան մինչև ժամը 11-ը ներկայացնել խնդիր Թիֆլիսի Արքունական Պալատին, կցելով խնդրքին առևտրական վկայագրերը, անցագիր՝ կոչման մասին, և պահանջվող գրաւականը՝ այն է տարեկան կապալագրամի $^1/_3$ մասը։ Փակ ծրարներով աճուրդին մասնակցողները պարտաւոր են՝ ոչ ուշ քան մինչև առաւօտեան ժամը 11-ը աճուրդի օրը՝ ներկայացնել կամ ուղարկել Թիֆլիսի Արքունական Պալատին յայտարարութիւն՝ գրված Արքուն. Կապալն. Կանօնադր. (հրատար. 1900 թ.) 144-րդ յօդ. ցոյց տրված ձևով, կցելով նոյնպէս վերոյիշեալ դօկումէնտները և գրաւականը։ Այն յայտարարութիւնները, որոնք համապատասխան չեն լինի Արքուն. Կապալն. և Մատակար. Կանօնադր. 144-րդ և 145-րդ յօդուածներին, կը համարվեն անվաւեր։ Ցանկացողները պայմանների հետ կարող են ծանօթանալ Նահանգական Վարչութեան մէջ և Թիֆլիսի Արքունական Պալատում ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտ. ժամը 10-ից մինչև 12-ը։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիֆլիսի նահանգի էտապային կայանների և պահանջվող սայլերի քանակի.

I. ԷՏԱՊԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՄՇՏԱԿԱՆ ՍԱՅԼԵՐՈՎ.

Թիֆլիսում.	
Թիֆլիսի կայան (ունի էտապային շինութիւն)	6 սայլ
Սղնախի գաւառում.	
Կակաբէթի (ունի էտապային շինութիւն)	2 »
Կաչրէթի (ունի էտապային շինութիւն)	2 »
Նուկրիանի	5 »
Մուկուզանի (ունի էտապային շինութիւն)	1 »
Լագօդէխի (ունի էտապային շինութիւն)	2 »
Ալազանի (ունի էտապային շինութիւն)	2 »
Ցարսկիէ-Կօլօդցի (ունի էտապային շինութիւն)	1 »

II. ԷՏԱՊԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՍԱՅԼԵՐՈՎ.

Թիֆլիսի գաւառում.	
Վազիանի (ունի էտապային շինութիւն)	4 »
Սարթաչալայի (ունի էտապային շինութիւն)	4 »
Մուխրօվանի (ունի էտապային շինութիւն)	3 »
Գօմբօրի (ունի էտապային շինութիւն)	3 »
Ախալքալաքի գաւառում.	
Խերտվիսի (ունի էտապային շինութիւն)	2 »
Ախալքալաքի	2 »
Թելաւի գաւառում.	
Թելաւի	3 »
Ախալցխայի գաւառում.	
Ացխուրի (ունի էտապային շինութիւն)	2 »
Ասպինձի (ունի էտապային շինութիւն)	2 »
Ախալցխայի	2 »
Գօրու գաւառում.	
Բօրժոմի	1 »

(ա. շ.) 1230. 3—2

Типографія „Экономія", Большая-Ванкская № 3.